

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 50-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ
ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ	4
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	7
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ	8
4. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ.....	12
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	14
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	16
6.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	16
6.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման).....	21
7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	43
7.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	43
7.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման).....	49
8. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ.....	50
8.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ	50
8.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման).....	52
8.3 Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ.....	55
8.4 Գծանշման աշխատանքներ	56
8.5 Գնումներ	57
8.6 Առարկություններ և պարզաբանումներ	57

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	59
10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	60

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 23/3 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ քաղաքացիական օրենսգիրք», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 13.02.2014թ «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշում, ՀՀ կառավարության 04.11.2010թ «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1419-Ն որոշում, ՀՀ կառավարության

04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում, ՀՀ կառավարության 19.03.2015թ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում, ՀՀ կառավարության 29.03.2019թ «ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 383-Ն որոշում «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակում կնքված պայմանագրեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2017թ հունվարի 1-ից մինչև 2019թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

2019թ նոյեմբերի 9-ից մինչև 2021թ փետրվարի 26-ը ներառյալ:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության համաձայն:

Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ,

վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 5-րդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

«Հայավտոճան»	«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն»
ԱԲԳ	Ասֆալտբետոնի գործարան
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱԿ	Արտադրական կոոպերատիվ
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԳՑՄ	Գծամետր
ԳՕՍՍ	Պետական ստանդարտներ
Ծրագիր	«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի
Կարգ	04.10.2010թ թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգ»
Կմ	Կիլոմետր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՇՆԱԿ	Շինարարական նորմեր և կանոններ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
Սմ	Սանտիմետր
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
Քմ	Քառակուսի մետր

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագիրը (միջոցառման դասիչը՝ 1049-11001) իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: Համաձայն ՀՀ կառավարության 06.06.2019թ «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման ծախսային ծրագրերով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի և միջոցառումները կատարողի իրավունքների և 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված առանձին եկամտատեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման գանձման համար պատասխանատու պետական մարմնի լիազորությունները փոխանցելու մասին» N 726-Ն որոշման, ծրագրի իրականացման լիազորությունները ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունից փոխանցվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ ենթածրագրով

1. ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոճանապարհային ճանապարհների ցանկում որոշ ճանապարհների ըստ նշանակության դասակարգումը չի համապատասխանում «Ավտոճանապարհային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով սահմանված պահանջներին: Արդյունքում,

որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ և դրանց պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները 323,347.00 հազ. դրամով: 167.8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են *տեղական նշանակության* ճանապարհներ, որոնց կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես

տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկած պայմանագրային գները *223,162.00 հազ. դրամով*: 34.5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար 2017-2019թթ վճարվել է *46,777.00 հազ դրամ*, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում:

Որպես Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից 569.3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է *2,041,260.00 հազ. դրամ*: 58.7 կմ-ն հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է *101,701.50 հազ. դրամ*, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում: 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար կատարողականներով հաշվարկվել և վճարվել է *22,469.00 հազ. դրամ*:

2. Ձյան տեղումների բացակայության պայմաններում համաձայն կարգի 28-րդ հոդվածի սահմանված համամասնությամբ պետք է կատարողականներից նվազեցվեր *122,474.00 հազ. դրամ* ինչը չի կատարվել:

3. Թվով 10 օբյեկտներում պահպանման աշխատանքներն իրականացնող ընկերությունների հետ կնքվել են նաև այդ ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքների (հիմնականում փոսային նորոգման) պայմանագրեր այն դեպքում, երբ պահպանության պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների մեջ արդեն իսկ մտնում էին վերանորոգման աշխատանքների պայմանագրերում ներառված աշխատանքների իրականացումը կամ նույն աշխատանքները նույն կապալառուներին պատվիրվել են կրկնակի և պահպանման պայմանագրերով նախատեսվածից վերանորոգման պայմանագրերով ավել է վճարվել *185,339.00 հազ. դրամ*:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման) ենթածրագրով

4. Չնայած նրան, որ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական ավտոճանապարհը I-ին տեխնիկական կարգի է և համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի պահանջների ճանապարհի վերին շերտը պետք է կառուցվեր Ա տիպի I մակնիշի ասֆալտբետոնյա խառնուրդով, թվով 2 պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքներում ասֆալտբետոնյա վերին շերտի ծածկը կառուցվել է Ա տիպի II մակնիշի ասֆալտբետոնե խառնուրդով, կամ 178,845

քմ ասֆալտապատման աշխատանքները գումարով 701,175.50 հազ. դրամի, չեն համապատասխանում գործող շինարարական նորմերի պահանջներին:

5. Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների աշխատանքներն ընդունելիս մի շարք այլ ցուցանիշների հետ միաժամանակ պետք է ստուգվեն նաև ճանապարհային պատվածքի և ավտոմոբիլի անիվի կառչումը ծածկից կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը): 2017-2019թթ որևէ պայմանագրի շրջանակում աշխատանքները ընդունելու համար պարտադիր ստուգման ենթակա նշված ցուցանիշը չի ստուգվել:

6. Թվով 6 պայմանագրերի շրջանակներում աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետներում և նախագծով, նորմերով և ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան չկատարելու պարագայում պատվիրատուն չի օգտվել Պայմանագրերի 3.1.4 կետի բ և գ ենթակետերով իրեն վերապահված իրավունքից՝ միակողմանի չի լուծել պայմանագրերը և չի պահանջել հատուցել իրեն պատճառված վնասը և չի նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունները ընդգրկվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ավելին, 2020թ-ին Նախարարությունը այդ ընկերությունների հետ կնքել է նոր պայմանագրեր և համաձայնագրեր: Ընդ որում, նշվածներից թվով 3 պայմանագրի դեպքում, չունենալով նման իրավասություն, պատվիրատուն կասեցրել է պայմանագիրը, հնարավորություն տալով կապալառուին խուսափելու պայմանագրով նախատեսված վերը հիշատակված տույժից կամ տուգանքից, դեռ ավելին, պայմանագրով չունենալով կանխավճար տալու պարտավորություն, պայմանագրային ողջ գումարը փոխանցել է կապալառուին որպես կանխավճար:

7. Թվով 1 պայմանագրի շրջանակում կառուցված ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի հանուկների լաբորատոր հետազոտության արդյունքների համաձայն 21,000քմ ճանապարհածածկույթին համապատասխանող ասֆալտբետոնե ծածկի միջին խտությունները պակաս են աշխատանքներն ընդունելու համար ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 14.77 կետով սահմանված թույլատրելի ցուցանիշներից, հետևաբար 96,012.00 հազ. դրամի աշխատանքները պետք է մերժվեն:

Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ ենթաձրագրով

8. 2016-2018թթ Հանրապետական և միջպետական նշանակության ավտոճանապարհներին տեղադրվել են 167,163 գծմ նոր մետաղական արգելափակոցներ, որոնցից 21,856 գծմ-ի երաշխիքային ժամկետը սահմանվել է 3

տարի, իսկ մնացածինը 1 տարի, տեղադրման հենց հաջորդ տարվանից, դեռևս երաշխիքի մեջ գտնվող արգելափակոցները հանձնվել են պահպանության այնինչ համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011թ թիվ 79-Ն հրամանով հաստատված մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների և դրանց ընդունման կարգի ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանման աշխատանքների զգալի մասն ըստ էության արգելափակոցներում՝ ԳՕՍՏ-ի պահանջների նկատմամբ ի հայտ եկած թերությունների վերացման աշխատանքներ են և երաշխիքային ժամկետում դրանց ի հայտ գալու դեպքում այն պետք է իր հաշվին վերացնեն արգելափակոցները տեղադրող կապալառու ընկերությունը:

4. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

Մենք հաշվեքննության ենք ենթարկել 2017-2019 թվականների ընթացքում «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից իրականացված՝ «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) համապատասխանությունը հաշվեքննության առարկայի չափանիշներին (այսուհետ՝ Օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Ղեկավարության պատասխանատվությունը խնդրո առարկայի համար

Նախարարության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի՝ Օրենսդրության և այլ իրավական ակտերի դրույթների համաձայն, իրականացման համար:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք Ծրագրի իրականացման վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությանը համապատասխան: Այդ մեթոդաբանությամբ պահանջվում է, որ մենք հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ Ծրագրի իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից և խեղաթյուրումներից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի հետևանքով վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման էական անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված Ծրագրի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցները մեր կարծիքի հիմնավորելու համար:

Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգման, հիմք

Ինչպես նկարագրված է հաշվեքննության ընթացիկ եզրակացության 6-րդ, 7-րդ և 8-րդ բաժիններում, Նախարարությանը կողմից ծրագիրն իրականացրել է Օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին անհամապատասխանություններով և խեղաթյուրումներով: 2017-2019 թվականների ընթացքում խեղաթյուրումներով օգտագործվել են 632,061.80 հազար դրամ ընդհանուր գումարով բյուջետային միջոցներ:

Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ձևափոխված կարծիքի՝ ոչ լիարժեք եզրահանգման, հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, 2017-2019 թվականների ընթացքում ծրագրի իրականացումը բոլոր էական առումներով համապատասխանում է Օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

Արմեն Գևորգյան

ՀՀ Հաշվեքննիչ Պալատի անդամ

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել ավտոմոբիլային ճանապարհների՝ արհեստական կառույցների, հողային պաստառի, տրանսպորտային հանգույցների, կահավորանքի և ինժեներական շինությունների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհ) պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման համար սահմանվում են հետևյալ տեսակները՝ ընթացիկ ամառային պահպանում և ընթացիկ ձմեռային պահպանում: Ընթացիկ ամառային պահպանումը (գարուն-ամառ-աշուն ժամանակահատված) իրականացվում է տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 16-ը, ընթացիկ ձմեռային պահպանումը (ձմեռվա ժամանակահատված)՝ տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը և նոյեմբերի 16-ից մինչև հունվարի 1-ը:

Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման մակարդակի աստիճանի որոշման նպատակով «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է ավտոմոբիլային ճանապարհների պահպանման մակարդակի գնահատում, որի հիման վրա, պայմանագրի պահանջներից ելնելով, որոշվում է կատարված աշխատանքների վճարի չափը:

Հաշվեքննվող ժամանակաշրջանում Ծրագրի իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 28,634,803.30 հազ. դրամ: Մանրամասները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագրի շրջանակում իրականացված ծախսերը

Հազ. դրամ

Ծրագրերի անվանումները	Տարեկան ճշտված պլան				Փաստ			
	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	7,354,172	8,698,003	14,327,916	30,380,091	7,299,910	8,542,192	12,792,701	28,634,803
Այդ թվում՝								

1. Ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում, այդ թվում՝	7,112,119	8,455,950	14,085,863	29,653,933	7,061,717	8,300,205	12,550,649	27,912,571
1.1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում	5,028,781	5,140,000	5,250,000	15,418,781	4,978,388	5,019,342	4,786,320	14,784,049
1.2 Պարբերական պահպանում (միջին նորոգում)	863,338	1,975,950	7,405,863	10,245,152	863,338	1,975,763	6,454,537	9,293,638
1.3. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում	350,000	410,000	450,000	1,210,000	349,993	409,983	400,820	1,160,796
1.4 Մետաղական արգելափակիչների պահպանում և վնասված հատվածների վերականգնում	870,000	930,000	980,000	2,780,000	869,998	895,117	908,972	2,674,087
2. Արհեստական կառույցների պահպանում և շահագործում, այդ թվում՝	242,053	242,053	242,053	726,158	238,193	241,987	242,053	722,232
2.1 Պուշկինի թունել Լոռու մարզ	36,239	36,239	36,239	108,717	36,088	36,239	36,239	108,566
2.2 Դիլիջանի թունել Գեղարքունիքի և Տավուշի մարզեր	99,462	99,462	99,462	298,386	99,462	99,462	99,462	298,386
2.3 Նալբանդի թունել Լոռու մարզ	32,036	32,036	32,036	96,107	32,036	32,036	32,036	96,107
2.4 Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջ Սյունիքի մարզ	10,043	10,043	10,043	30,130	10,043	10,043	10,043	30,130
2.5 Հ-6 Արովյան-Եղվարդ-Աշտարակ ա/ճ-ի Հրազդան գետի վրայի կամուրջ Կոտայքի մարզ	15,840	15,840	15,840	47,520	15,840	15,774	15,840	47,454
2.6 Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման ա/ճ-ի Քասախ գետի վրայի կամուրջ Արագածոտնի մարզ	17,280	17,280	17,280	51,840	13,680	17,280	17,280	48,240
2.7 Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի Ձորագետ գետի վրայի կամուրջ Լոռու մարզ (ք. Ստեփանավան)	16,273	16,273	16,273	48,819	16,165	16,273	16,273	48,711
2.8 Ջերմուկ քաղաքի կամուրջ Վայոց ձորի մարզ	14,880	14,880	14,880	44,640	14,880	14,880	14,880	44,640

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ

6.1.1 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, համապատասխանաբար.

- միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին **և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցություն.**

- ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

• 387 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, **սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն.** հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին): Նշված ավտոճանապարհներից ամառային պահպանությունում ներառվել են 2017թ-ին 350.66կմ 2018թ-ին 331.96կմ

և 2019թ-ին 306.46կմ, իսկ ձմեռային պահպանությունում ներառվել են 2017թ-ին 368.34կմ, 2018թ-ին 350.52կմ և 2019 թ-ին 350.52կմ: Ամառային պահպանությունում ներառված ավտոճանապարհներից 2017 թ-ին 214.7կմ, 2018թ-ին 211.4կմ, 2019 թ-ին 219.52 կմ և ձմեռային պահպանությունում ներառվածից 2017 թ-ին 326.82կմ, 2018թ-ին 319.1կմ և 2019 թ-ին 319.1կմ ավտոճանապարհների որպես միջպետական նշանակության ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես հանրապետական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար կապալառու ընկերությունների առաջարկված պայմանագրային գները **323,347.00 հազ. դրամով** (մանրամասն տե՛ս հավելված 1 և հավելված 2):

- 167,8 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին): Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն 3-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի մարզային նշանակության ավտոճանապարհների պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն են: Նշված ավտոճանապարհները 2017-2019թթ ներառվել են պահպանման համաձայնագրերում որպես միջպետական նշանակության ճանապարհներ, որոնց պահպանության համար հաշվարկվել և վճարվել է **666,112.00 հազ. դրամի** կատարողական: Ընդ որում՝ նշված 167,8 կմ որպես միջպետական նշանակության ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար կատարողականներով հաշվարկված գները գերազանցում են որպես տեղական նշանակության նույն վիճակի և պահպանման մակարդակի ավտոճանապարհների համար նույն կապալառու ընկերությունների առաջարկված պայմանագրային գները **223,162.00 հազ. դրամով** (մանրամասն տես հավելված 1 և հավելված 3):

- 34.5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանման համար 2017-2019թթ վճարվել է **46,777.00 հազ. դրամ**, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքներ ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում (մանրամասն տես հավելված 1 և հավելված 3Ա):

6.1.2 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի

- Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ,

- խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով որպես Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

- 569.3 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար 2017-2019թթ կատարողականներով հաշվարկվել և վճարվել է **2,041,260.00 հազ. դրամ** (տես հավելվածներ 4 և 4Ա): Ընդ որում, այս ցանկում առկա < 28-Մեղրաձոր-Մարգահովիտ-Մ8 ճանապարհը անցանելի չէ, չի ապահովում տրանսպորտային հաղորդակցություն, սակայն յուրաքանչյուր տարի դրա ձմեռային պահպանության համար հաշվարկվել և վճարվել է 1,024.00 հազ. դրամ:

- 58.7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանության համար 2017-2019թթ կատարողականներով հաշվարկվել և վճարվել է **101,701.50 հազ. դրամ**, այնինչ ՀՀ օրենսդրությամբ այդ ճանապարհների պահպանություն չի նախատեսվում (տես հավելվածներ 4 և 4Բ):

- 7.6կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2017-2019թթ կատարողականներով հաշվարկվել և վճարվել է **22,469.00 հազ. դրամ** (տես հավելվածներ 4 և 4Գ):

- 24.4 կմ-ը միջպետական նշանակության ավտոճանապարհ:

6.1.3 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն Կարգի 9-րդ կետի պահանջի հետ

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ ավտոմոբիլային ճանապարհի վիճակը բնորոշվում է նրա շահագործողական հատկանիշներով, որոնցից կարևորագույնը ծածկի վիճակն է: Ավտոմոբիլային ճանապարհի վիճակի գնահատման հիմնական ցուցանիշ է սահմանվում ծածկի փոսայնությունը, լրացուցիչ ցուցանիշ է համարվում կողնակների և կողային ջրահեռացման առուների վիճակը: 2017-2019թթ ավտոճանապարհների վիճակի գնահատումն իրականացվել է միայն ավտոճանապարհի ծածկի փոսայնության հիման վրա, առանց հաշվի առնելու կողնակների և կողային ջրահեռացման առուների վիճակը:

6.1.4 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն Կարգի 26-րդ կետի պահանջների հետ

Համաձայն Կարգ-ի 26-րդ կետի ավտոմոբիլային ճանապարհների պահպանման դիտարկումները և պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է պատասխանատուի կողմից: Ընթացիկ ամառային և ձմեռային պահպանման միջանկյալ դիտարկումները իրականացվում են յուրաքանչյուր ամիս առնվազն 3 անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային կամ ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների համապատասխանությունը պահանջվող ցուցանիշներին, և առկա թերությունները արձանագրվում են ավտոմոբիլային ճանապարհի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրերում (ձև N2 և ձև N3): Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքների վարման մատյանում: Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրերում և պահպանման աշխատանքների վարման մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է ավտոմոբիլային ճանապարհների պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

✓ Չնայած նրան, որ Պահպանման աշխատանքների կատարման պետական գնման բոլոր պայմանագրերի շրջանակներում իրականացրած պահպանման աշխատանքների համար կազմվել են յուրաքանչյուր ամսվա համար թվով 3

միջանկյալ դիտարկման ամփոփագրերը, սակայն գործուղումներով հիմնավորվում է ընդամենը ամսեկան մեկ դիտարկման համար կատարված շրջայցը:

✓ Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական պայմանագրերով 2019թ-ին պահպանման հանձված 6 ճանապարհահատվածների (22.6կմ) պահպանման մակարդակը գնահատվել է և 23,679.70 հազ. դրամի կատարողականները ընդունվել են եռամսյակային կտրվածքով:

6.1.5 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման Համաձայնագրերի կնքման և ավտոճանապարհների վիճակի ու դրանց պահպանման մակարդակների գնահատման ակտերը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի կողմից հաստատելու ամսաթվերի միջև

2017թ-ի և 2018թ-ի համար ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակի ու դրանց պահպանման մակարդակների գնահատման ակտերը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի կողմից հաստատվել են համապատասխանաբար 20.01.2017թ թիվ 50-Ա և 16.01.2018թ թիվ 33-Ա հրամաններով, իսկ «պետության կարիքների համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման» Համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխանաբար 30.01.2017թ և 29.01.2018թ, այսինքն՝ 2017թ-ին և 2018թ հունվար ամսին, պահպանում իրականացնող ընկերությունները, պահպանում են իրականացրել չունենալով թե ինչ մակարդակի պահպանություն պետք է իրականացնեն, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների կատարման համար 2017թ-ին կազմված **421,523.80 հազ. դրամի** և 2018թ-ին կամված **432,018.00 հազ. դրամի** կատարողականները, և փաստաթղթավորել է, որ պահպանության ընթացքում ապահովվել են սահմանված չափանիշները՝ չունենալով այդ չափանիշները (կազմվել են ավտոմոբիլային ճանապարհների պահպանման միջանկյալ դիտարկումների ամփոփագրեր, այնտեղ նշելով ճանապարհի պահպանման պահանջվող մակարդակները և աշխատանքների

համապատասխանությունը այդ մակարդակներին չունենալով սահմանված պահպանման պահանջվող մակարդակները):

6.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման)

6.2.1 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի թ) կետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998թ թիվ 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի 1.3 կետի պահանջների հետ:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի թ) կետի կառուցապատողները պարտավոր են ապահովել քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով, և համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998թ թիվ 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի 1.3 կետի կառուցապատողը պարտավոր է իրականացնել շինարարության տեխնիկական հսկողություն անկախ իրականացվող շինարարության կազմակերպման ձևից:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8-րդ մասի՝ ճանապարհային պատվածքը բաղկացած է ճանապարհային **ծածկից** և **հիմքից**:

2017թ-ին կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված աշխատանքները (սառը վերամշակմամբ հիմքի շերտի պատրաստում, ավազակոպճային շերտի, բիտումով ներծծված խճային շերտով ենթահիմքի և հիմքի պատրաստում, միաշերտ և երկշերտ ասֆալտբետոնյա ծածկերի կառուցում և այլն) չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2015 թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ի 11-րդ մասով սահմանված ընթացիկ նորոգման պահանջներին (ընթացիկ նորոգման աշխատանքներ են սահմանվել ավտոմոբիլային ճանապարհների **ծածկի** փոսային նորոգման, քայքայված հատվածների փոխարինման աշխատանքները) և հանդիսանում են հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքներ: Հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի ա) և թ) կետերի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998թ թիվ 44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի 1.3 կետի պահանջների, կառուցապատողը պարտավոր

էր կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա և ապահովել քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն պատվիրատուն նշված պայմանագրերի շրջանակներում 2018 թ-ին կատարված աշխատանքների համար, ունենալով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ 2017թ-ին կնքված աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր, 2018թ-ին նշված ընկերության հետ չի կնքել այդ ծառայությունների մատուցման համաձայնագիր և չի ապահովել 1,549,861.00 հազ. դրամի աշխատանքների օրենսդրությամբ սահմանված կարգով որակի տեխնիկական հսկողության իրականացում:

2018թ-ին կնքված պայմանագրերից թվով երկուսում՝ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ348+750-Կմ354+520 հատվածի միջին նորոգման և Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման կմ110+900 - կմ118+300 հատվածի միջին նորոգման աշխատանքների պայմանագրերում (պայմանագրային ընդհանրու գումարը 1,133.75 հազ. դրամ է) նախատեսված աշխատանքները (ավազակոպճային, բիտումով ներծծված խճային շերտով ենթահիմքի և հիմքի պատրաստում, միաշերտ և երկշերտ ասֆալտբետոնյա ծածկերի կառուցում, խճային հիմքով փոսային նորոգում և այլն) նույնպես չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ի 7-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված ընթացիկ նորոգման պահանջներին և հանդիսանում են հիմնանորոգման աշխատանքներ, սակայն պատվիրատուն չի իրականացրել աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնում և չի ապահովել այդ աշխատանքների օրենսդրությամբ սահմանված կարգով որակի տեխնիկական հսկողության իրականացում:

6.2.2 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 721 հոդվածի 1-ին մասի և ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.25 կետի և աղյուսակ 33-ի պահանջների հետ

2018թ-ին «Լիլիթ-87» ՍՊԸ-ի հետ կնքած Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման կմ35+500-կմ40+100 հատվածի միջին նորոգման աշխատանքների պայմանագրի և 2019թ-ին «Արարատճանշին» ՍՊԸ-ի հետ կնքած Ա/ճ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, կմ67+240-կմ72+200 աջակողմյան և ձախակողմյան կմ72+200-կմ73+183 հատվածի միջին նորոգման

աշխատանքների պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքներում ասֆալտբետոնյա վերին շերտի ծածկը կառուցվել է Ա տիպի II մակնիշի ասֆալտբետոնե խառնուրդով, այնինչ նշված ճանապարհը I տեխնիկական կարգի է, և համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.25 կետի և աղյուսակ 33-ի պահանջների, I տեխնիկական կարգի ճանապարհի վերին շերտը պետք է կառուցվի I մակնիշի ասֆալտբետոնյա խառնուրդով կամ կատարողականներով 2018թ-ին ընդունված 52,542 քմ ասֆալտապատման աշխատանքները գումարով 199,500.00 հազ. դրամի և 2019թ-ին ընդունված 126,303քմ ասֆալտապատման աշխատանքները՝ գումարով 501,675.50 հազ. դրամի, չեն համապատասխանում գործող շինարարական նորմերի պահանջներին: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 721-րդ հոդվածի 1-ին մասի, այն դեպքերում, երբ կապալառուն աշխատանքը կատարել է կապալի պայմանագրի խախտմամբ, որը վատթարացրել է դրա արդյունքը կամ այլ թերություններով, պատվիրատուն իրավունք ունի, իր ընտրությամբ, կապալառուից պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները կամ համաչափորեն նվազեցնելու աշխատանքի համար սահմանված գինը. ինչը պատվիրատուի կողմից չի կատարվել:

6.2.3 (1049-11001) Առկա են անհամապատասխանություն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների հետ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների, աշխատանքներն ընդունելիս, մի շարք այլ ցուցանիշների հետ միաժամանակ պետք է ստուգվեն նաև ճանապարհային պատվածքի հարթությունը: 2017թ-ին թվով 5 և 2018թ-ին թվով մեկ օբյեկտում նշված ցուցանիշը չի ստուգվել կամ 2017թ-ին 126,219քմ ասֆալտապատման աշխատանքները գումարով 2,412,868.00 հազ. դրամի և 2018թ-ին 32,023 քմ ասֆալտապատման աշխատանքները գումարով 658,960.00 հազ. դրամի ընդունվել են առանց այդ աշխատանքներն ընդունելու համար պարտադիր ստուգման ենթակա ցուցանիշները ստուգելու:

6.2.4 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի և ՇՆևԿ 3.06.03-85-ի 10.40 կետի պահանջների հետ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների աշխատանքներն ընդունելիս մի շարք այլ ցուցանիշների հետ միաժամանակ պետք է ստուգվեն նաև ճանապարհային պատվածքի շերտերի խտությունը, բարձրություն: Համաձայն ՇՆևԿ 3.06.03-85-ի 10.40 կետի դրանք պետք է ստուգվեն

յուրաքանչյուր 7,000 քմ ծածկից երեք տեղով (մեկ լրակազմ) հանված հանուկներով: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018 թ-ին կնքված թվով 4 պայմանագրերի շրջանակներում վերը նշված նորմայից պակաս են հետազոտվել 11 լրակազմ հանուկներ, իսկ 2019թ-ին թվով 5 պայմանագրերի շրջանակներում՝ թվով 12 լրակազմ հանուկներ: 2018թ-ին կամ 70,762 քմ ասֆալտբետոնյա վերին ծածկի աշխատանքները՝ գումարով 275,687.00 հազ. դրամի, և 2019թ-ին 89,908քմ ասֆալտբետոնյա վերին ծածկի աշխատանքները՝ գումարով 365,862.00 հազ. դրամի, ընդունվել են առանց պահանջվող հետազոտությունների իրականացման: Մանրամասն տե՛ս հավելվածներ 5.1 և 5.2-ում:

6.2.5 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների հետ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 15.3 կետի և Գ) հավելվածի պահանջների աշխատանքներն ընդունելիս մի շարք այլ ցուցանիշների հետ միաժամանակ պետք է ստուգվեն նաև ճանապարհային պատվածքի և ավտոմոբիլի անիվի կառուցումը ծածկից կամ ծածկի անողորկությունը (խորդուբորդությունը): 2017-2019թթ որևէ պայմանագրի շրջանակում աշխատանքները ընդունելու համար պարտադիր ստուգման ենթակա նշված ցուցանիշը չի ստուգվել:

6.2.6 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2011 թ-ի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ի պահանջների հետ

Համաձայն «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ի աշխատանքների նախահաշվային արժեքը գոյանում է ծախսերից, շահույթից և հարկերից: Ծախսերը բաղկացած են երեք բաղադրիչից՝ աշխատավարձ, մեքենա-մեխանիզմի շահագործման ծախսեր և նյութերի արժեք և հաշվարկվում են տարանջատված կարգով: Աշխատավարձը հաշվարկվում է նորմերով սահմանված աշխատատարության (մարդ-ժամ) և դրույքաչափի արտադրյալով, մեքենամեխանիզմների ծախսը հաշվարկվում է մեքենամեխանիզմների աշխատանքի նորմերով սահմանված ժամանակի (մեքենա-ժամ) և մեքենա-ժամի արժեքի արտադրյալով, իսկ նյութերի արժեքը հաշվարկվում է ծախսի նորմերով և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկվող ամենամսյա տեղեկագրերում սահմանված նյութերի գներով:

2018թ-ի աշխատանքների նախահաշվային արժեքները հաշվարկել են յուրաքանչյուր աշխատանքի համար մեկ ամբողջական թվով արտահայտված, ոչնչով չհիմնավորվող, աշխատանքների միավոր գներով:

6.2.7 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ԳՕՍՍ 9128-2013-ի 4.1.19 կետի պահանջի հետ

Համաձայն ԳՕՍՍ 9128-2013-ի 4.1.19 կետի պահանջի ասֆալտբետոնե խառնուրդում բիտումի պարունակության շեղումը չպետք է գերազանցի նախագծով (բաղադրատոմսով) սահմանված զանգվածի +/- 0,5%-ը, այնինչ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ283+200-կմ284+200 հատվածի և Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ289+650-կմ291+450 հատվածի միջին նորոգման աշխատանքներում վերին շերտի ասֆալտբետոնե խառնուրդի լաբորատոր հետազոտության արդյունքներով թվով 4 դեպքով և ներքին շերտի լաբորատոր հետազոտության արդյունքներով թվով 8 դեպքով ասֆալտբետոնի խառնուրդում բիտումի պարունակության շեղումը բաղադրատոմսով սահմանված չափաբանից գերազանցում է 0,5%-ը կամ նշված նմուշներին համապատասխանող 21,245 քմ վերին և ներքին շերտի ասֆալտապատման աշխատանքները՝ գումարով 250,203.80 հազ. դրամի, չեն համապատասխանում գործող ստանդարտների պահանջներին: Մանրամասները տե՛ս հավելված 6-ում:

6.2.8 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն ԳՕՍՍ 9128-2013-ի 6.1, 6.2, 6.5 և 6.6 կետերի պահանջների նկատմամբ

Համաձայն ասֆալտբետոնե խառնուրդի ԳՕՍՍ 9128-2013-ի 6.1, 6.2, 6.5 և 6.6 կետերի պահանջների առավելագույնը յուրաքանչյուր 1200տ ասֆալտբետոնե խառնուրդից պետք է կատարվի խառնուրդի նմուշառում և այն ենթարկվի լաբորատոր հետազոտության: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2017թ-ին թվով 3 պայմանագրերի շրջանակներում նորմայից պակաս են իրականացվել ասֆալտբետոնե խառնուրդի թվով 16 լաբորատոր հետազոտություններ: Մանրամասն տե՛ս հավելված 7-ում:

6.2.9 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն թերությունների ակտում ներառված լաբորատոր հետազոտությունների ցանկի հետ

2019թ-ին կազմված թերությունների ակտերում լաբորատոր հետազոտությունների ցանկում սահմանվել են պահանջվող լաբորատոր ստուգումների քանակները: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թվով մեկ

պայմանագրերի շրջանակներում սահմանվածից պակաս են իրականացվել ասֆալտբետոնե խառնուրդի թվով 4 լաբորատոր հետազոտություններ: Մանրամասն տե՛ս հավելված 8-ում:

6.2.10 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի ա) կետի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգ»-ի 79-րդ մասի 2-րդ կետի, «ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգ»-ի 3-րդ և 23-րդ մասերի, և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ թիվ 128-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»-ի 5-րդ մասի պահանջների հետ:

Համաձայն

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի պահանջի կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա

- ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգ»-ի 79-րդ մասի 2-րդ կետի պահանջի պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների նախագծման դեպքում նախագծի կազմում պարտադիր մշակվում են օբյեկտի նախահաշվային փաստաթղթերը:

- «ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգ»-ի 3-րդ և 23-րդ մասի պահանջների քաղաքաշինական փաստաթղթերը, մինչև դրանց՝ սահմանված կարգով համաձայնեցումն ու հաստատումը, ենթակա են փորձաքննության և պետական և համայնքի բյուջեների (ներառյալ՝ վարկային և դրամաշնորհային միջոցները) հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող ճարտարապետաշինարարական օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվում նախահաշվային փաստաթղթերի ներառմամբ:

- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ թիվ 128-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»-ի «Ընդհանուր դրույթներ» վերատառությամբ բաժնի 5-րդ կետի՝ պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային, եթե միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների համար նախագծի կազմում պարտադիր մշակվում են օբյեկտի նախահաշվային փաստաթղթերը:

2018թ-ին կնքված Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման կմ110+900 - կմ118+300 հատվածի միջին նորոգման պայմանագրով (պայմանագրային գինը 316,273.00 հազար դրամ) աշխատանքները (բիտումով ներծծված խճային շերտով ենթահիմքի և հիմքի պատրաստում, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկերի կառուցում և այլն) չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2015թ թիվ 596-Ն որոշմամբ սահմանված ավտոճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքներին և հանդիսանում են հիմնանորոգման աշխատանքներ, սակայն աշխատանքներն իրականացվել են առանց օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված և փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի:

6.2.11 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 1.2 և 1.3 կետերի պահանջների հետ

«Ավվա 2000» ՍՊԸ, «Արգիշտի-1» ՍՊԸ և «Ճանապարհ» ՍՊԸ հետ 2019թ հուլիս և օգոստոս ամիսներին կնքվել են թիվ ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ-6, թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/17Շ-2 և թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/14Շ-1 պայմանագրերը համապատասխանաբար 354,000.00 հազ. դրամի, 594,000.00 հազ. դրամի և 435,000.00 հազ. դրամի: Պայմանագրերի 1.3 կետերով աշխատանքների ավարտի ժամկետ են սահմանվել 01. 11. 2019թ-ը և 10. 12. 2019թ-ը: Սահմանված ժամկետում աշխատանքներն ամբողջությամբ չեն ընդունվել: Աշխատանքներն իրենց ֆիզիկական ծավալներով փաստացի տեղում ամբողջությամբ կատարված լինելու պարագայում, 2019թ-ին դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունվել են ընդամենը 282,500.00 հազ. դրամի, 407,878.00 հազ. դրամի և 233,836.00 հազ. դրամի աշխատանքներ կամ պայմանագրերով նախատեսվածներից 458,786.00 հազ. դրամով պակաս: Որևէ բացատրություն կամ պարզաբանում մնացած աշխատանքները չընդունելու փաստով պատվիրատուն հաշվեքննությանը չի

ներկայացրել: Ավելին, չի ներկայացրել նաև փաստացի տեղում կատարված, սակայն չընդունված աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով կազմված ծածկված աշխատանքների ակտերը, պահանջվող լաբորատոր հետազոտությունների արդյունքները՝ այդ թվում ասֆալտբետոնե խառնուրդների և ասֆալտբետոնե ծածկից հանուկների լաբորատոր հետազոտության արդյունքները:

Պայմանագրով, կատարված աշխատանքները չընդունելու մեկ դեպք է սահմանված, այն է՝ եթե աշխատանքի արդյունքը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին և ծավալաթերթ նախահաշվին (կետ 3.1.3):

Աշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետներում և նախագծով սահմանված պահանջներին համապատասխան չկատարելու պարագայում պատվիրատուն չի օգտվել Պայմանագրերի 3.1.4 կետի բ և գ ենթակետերով իրեն վերապահված իրավունքից՝ միակողմանի չի լուծել պայմանագրերը և չի պահանջել հատուցել իրեն պատճառված վնասը և չի նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունները ընդգրկվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ավելին, 2020թ-ին Նախարարությունը այդ ընկերությունների հետ կնքել է նոր պայմանագրեր և համաձայնագրեր:

6.2.12 (1049-11001) Առկա են անհամապատասխանություններ պայմանագրերի 1.2, 1.3-րդ, 5-րդ, 8.1-րդ, 8.5-րդ, 8.6-րդ կետերի պահանջների հետ, թերությունների ակտի և դրա հիման վրա կազմված և պայմանագրի համար հիմք հանդիսացած համահավաք ամփոփագրի միջև

✓ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման կմ110+900- կմ118+300 հատվածի միջին նորոգման աշխատանքների կատարման համար հիմք են ընդունել ՏԱ և ՃԱ բաժնի գլխավոր մասնագետների կողմից կազմված թերությունների ակտը, որտեղ նշվել է, որ աշխատանքային խումբը որոշել է **միջին նորոգման** նպատակով իրականացնել հողային աշխատանքներ, կողնակներ և կողային առուներ, ուղղորդ սյուների տեղադրում, գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզում 5 սմ հաստությամբ, կատարել փոսային նորոգում միջինը 4սմ հաստությամբ, առանձին հատվածներում տեղադրել հարթեցնող շերտ 3 սմ հաստությամբ, տեղադրել նոր ա/բ ծածկ 5սմ հաստությամբ և կատարել գծանշում:

Չնայած նրան, որ թերությունների ակտում արձանագրվել է, որ պետք է իրականացվի փոսային նորոգում 4սմ հաստությամբ, նույն խմբի կողմից կազմված համահավաք ամփոփագրում այդ աշխատանքների փոխարեն հաշվարկվել է 2,598քմ 8սմ-16սմ հաստությամբ բիտումով ներծծված խճային հիմքով փոսային նորոգման և 6սմ հաստությամբ խոշորահատիկ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ: Համաձայն նույն խմբի կողմից կազմված երթևեկելի մասի ամփոփագրի, նշված 2,598քմ-ից 1,784քմ-ն 254գծմ երկարությամբ չընդհատվող հատվածում ճանապարհի ողջ լայնությամբ իրականացվող բիտումով տոգորված խճային հիմքի և ծածկի փոխման աշխատանքներ են: Ընդ որում, Կմ115+000-Կմ115+100 հատվածում հաշվարկվել է 800քմ (8մ լայնությամբ) 8-16սմ բիտումով ներծծված խճային հիմքով և 6սմ հաստությամբ խոշորահատիկ ա/բ-ով ծածկի կառուցում այն դեպքում, երբ այդ հատվածում ճանապարհի մակերեսը և նոր տեղադրվող վերին շերտի մակերեսը կազմել է ընդամենը 780քմ (լայնությունը 7.8մ):

30. 10. 2018թ-ին, **հրապրայ բաց մրցույթ** ընթացակարգով իրականացրած մրցույթի արդյունքների հիման վրա, «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի հետ կնքել են Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման ճանապարհի Կմ 10+900-Կմ 118+300 հատվածի միջին նորոգման աշխատանքների կատարման պետական գնման թիվ SԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018-19Շ պայմանագիրը 316,273.40 հազ. դրամ պայմանագրային գնով: Համաձայն պայմանագրի 1.3 կետի և 8.1 կետի, աշխատանքների ավարտի ժամկետը սահմանվել է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 35 օր հետո՝ 2018թ-ի դեկտեմբերի 4-ը:

2018թ-ին կատարված աշխատանքների համար որևէ կատարողական ակտ չի կազմվել:

Համաձայն պայմանագրի 8. 6 կետի աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրով, մինչև պայմանագրով այդ ժամկետի լրանալը կապալառուի առաջարկության առկայության դեպքում: Համաձայն պայմանագրի 8.5 կետի պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխության յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը: Առանց կապալառուի առաջարկության առկայության և ՀՀ կառավարության կողմից հաստատված որևէ դեպքի, 2018թ դեկտեմբերի 20-ին՝ պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետից 16 օր անց, պայմանագրով չունենալով սահմանված պայմանագրի կասեցման որևէ դեպք և իրավունք, կնքվել է պայմանագրի Համաձայնագիր թիվ 1-ը, որով կասեցվել է պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ մայիսի 31-ը և սահմանվել է կատարման նոր ժամկետ՝ մայիսի 31-ից հաշված 30 օր: Ավելին, չնայած նրան, որ

պայմանագրով (5-րդ կետ՝ աշխատանքի գինը և վարձատրությունը) աշխատանքների կատարման համար կանխավճարի տրամադրում չի նախատեսվել, Համաձայնագրով նախատեսել են պայմանագրային ողջ գումարը՝ 316,273.40 հազ. դրամը փոխանցել կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար:

Կատարված աշխատանքների համար՝ համաձայնագրով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետից՝ 01.07.2019թ-ից, ուշացմամբ 11.09.2019թ, 04.10.2019թ և 26.11.2019թ կազմվել են թվով երեք կատարողական ակտեր, պայմանագրի կատարման մասին եզրակացություններ և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններ համապատասխանաբար 75,451.50 հազ. դրամի 111,152.00 հազ. դրամի և 126,216.60 հազ. դրամի, ընդամենը 312,820.20 հազ. դրամի կամ պայմանագրային գնից և վճարված կանխավճարից 3,453,00 հազ. դրամով պակաս: Պայմանագրի կատարման մասին եզրակացություններում արձանագրել են պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու և ուշացնելու համար կիրառել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը ինչը տվյալ դեպքում կազմում է 15,757.50 հազ. դրամ: Բացի այդ ճանապարհի անհարթության ստուգմամբ արձանագրված շեղումների հետևանքով, ՀՀ կառավարության 29.09.2016թ նիստի թիվ 38-Ա արձանագրային որոշման հիման վրա, հաշվարկվել է նվազեցման ենթակա գումար 281.40 հազ. դրամի չափով: Այսպիսով՝ վճարված 316,273.40 հազ. դրամի փոխարեն, կատարված աշխատանքների համար կազմված փաստաթղթերի համաձայն, վճարման ենթակա գումարը կազմում է 296,781.30 հազ. դրամ: Արձանագրություններին ի պատասխան ներկայացրած առարկություններով և քաղաքացիություններով հաշվեքննողներին է ներկայացվել ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե հետ վճարած 14,751.59 հազ. դրամի վճարման հանձնարարականներ կամ ընկերությանը ավելի է վճարվել 4,740.51 հազ. դրամ:

Կապալառուն 26.11.2019թ-ի թիվ 198 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարին՝ նշելով, որ «Հայավտոճան տնօրինության» ՊՈԱԿ-ի և «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ համատեղ չափագրումների արդյունքում երթևեկելի մասի ա/բ ծածկը նորոգվել է կից ներկայացվող վերանայված ամփոփագրում նշված ծավալներին համապատասխան, և խնդրել է պայմանագրում կատարել համապատասխան փոփոխությունը: Կից ներկայացված վերանայված (փաստացի) ամփոփագրում՝ ստորագրված «Հայավտոճան տնօրինության» ՊՈԱԿ-ի և «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից, վերականգնված մանրահատիկ

ասֆալտբետոնե վերին շերտի փաստացի հաստությունը ցույց է տրվել 4սմ պայմանագրով նախատեսված 5սմ-ի փոխարեն: Նշված գրության հիման վրա կատարված պայմանագրի փոփոխություն չի իրականացվել և կատարողականներով ասֆալտբետոնե վերին շերտի հաստությունը հաշվարկվել և վճարվել է 5սմ հաստությամբ գրությունում նշված փաստացի 4 սմ հաստության փոխարեն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 30.08.2019թ գրությամբ Նախարարության, «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի և Տավուշի մարզպետարանի աշխատակիցներից ստեղծված մասնագիտական խմբի կողմից Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադր սահման ավտոճանապարհի կմ110+900-կմ118+300 հատվածի միջին նորոգման աշխատանքներում ի հայտ եկած թերությունների վերացման և ա/բ վերին շերտի տեղադրման վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացության, վերոնշյալ ճանապարհահատվածի կմ 115+100-կմ 118+300 տեղամասում նախատեսված աշխատանքները (գոյություն ունեցող ծածկի ֆրեզում, փոսային նորոգում, հարթեցնող և ա-բ ծածկ) **կատարվել են 2018թ**, սակայն նշված հատվածում 2019թ ի հայտ են եկել թերություններ (փոսեր և փքվածքներ), որոնց շտկման նպատակով կապալառուն կատարել է երթևեկելի մասի վրա առաջացած փոսերի և փքվածքների վերացում՝ խճային հիմքով փոսային նորոգման միջոցով: Մասնագիտական խումբը դիտարկելով վերոնշյալ հատվածում կապալառուի կողմից կատարված աշխատանքները փաստել է, որ ի հայտ եկած թերությունները վերացված են և արդյունքում տվել է դրական եզրակացություն այդ տեղամասում լրացուցիչ ա/բ ծածկի տեղադրման աշխատանքների կատարման համար:

Այսպիսով՝ մինչև 2018թ դեկտեմբերի 20-ը՝ Համաձայնագիր 1-ը կնքելու օրը, կապալառուի կողմից պայմանագրով պատվիրված աշխատանքների զգալի մասը արդեն իսկ կատարված են եղել և եղել են անորակ: Պատվիրատուն չօգտվելով պայմանագրի 3.1.2 և 3.1.3 կետով իրեն վերապահված իրավունքներից, այն է՝ աշխատանքների կատարման ժամկետի խախտման դեպքում սահմանել աշխատանքներ կատարելու նոր ժամկետ (տվյալ դեպքում ոչ ավել 30 օրից) պահանջելով վճարել սահմանված տույժը և չընդունել աշխատանքի արդյունքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների, ստանդարտների, Շինարարական նորմերի և կանոնների, աշխատանքի նախագծի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը յուրաքանչյուր ուշացված օրվա

համար կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05%-ի չափով ինչը տվյալ դեպքում կազմում է **95,934.54 հազ. դրամ**, առանց որևէ հիմնավորման և հիմքի, չունենալով նման իրավասություն, կասեցրել է պայմանագիրը, հնարավորություն տալով կապալառուին խուսափելու պայմանագրով նախատեսված վերը հաշվարկված տույժից կամ 6.3 կետով սահմանված տուգանքից, դեռ ավելին, պայմանագրով չունենալով կանխավճար տալու պարտավորություն, պայմանագրային ողջ գումարը փոխանցել է կապալառուին որպես կանխավճար:

Պատվիրատուն չի օգտվել նաև պայմանագրի 3.1.4 կետի բ) և գ) ենթակետով իրեն վերապահված իրավունքից՝ կատարված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու և նախագծային փաստաթղթերին չհամապատասխանելու հիմքով միակողմանի չի լուծել պայմանագիրը և չի պահանջել հատուցել իրեն պատճառված վնասը և չի նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունը ընդգրկվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ավելին, 2020թ-ին Նախարարությունը այդ ընկերության հետ կնքել է նոր պայմանագրեր և համաձայնագրեր:

Ծածկված աշխատանքների ակտերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք հիմնականում չեն համապատասխանում իրականությանը քանի, որ ինչպես նշվել էր մասնագիտական եզրակացությունում, կմ 115+100-կմ 118+300 հատվածում աշխատանքներն իրականացվել էին 2018թ-ին, սակայն չկան 2018 թ-ին կազմված ծածկված աշխատանքների ակտեր, բացի ֆրեզից: Բացակայում են այդ հատվածում 2019թ կատարված հիմքով փոսային նորոգման և հարթեցման ծածկված աշխատանքների ակտերը: Համաձայն ծածկված աշխատանքների ակտերի 02.06.2019թ-ին ԿՄ 111+350-ԿՄ111-750 հատվածում իրականացվել է 100քմ փոսերի կտրման և 8-16սմ հաստությամբ բիտումի ներծծմամբ խճային շերտի տեղադրման աշխատանքներ և թույլատրվել է իրականացնել 6-սմ ասֆալտբետոնյա շերտի տեղադրման աշխատանքներ, սակայն այդ հատվածի համար 6 սմ ասֆալտբետոնե շերտի տեղադրման ծածկված աշխատանքների ակտեր և փոման սխեմաներ չկան կազմված: Փոխարենը ԿՄ111+750-ԿՄ112-150 հատվածի համար կազմվել են 180քմ 6սմ ա-բ շերտի տեղադրման ծածկված աշխատանքների ակտեր և փոման սխեմաներ, սակայն այդ հատվածի համար առկա է ընդամենը 80քմ մակերեսով փոսերի կտրման և 8-16սմ հաստությամբ բիտումի ներծծմամբ խճային շերտի տեղադրման ծածկված աշխատանքների ակտեր: 6 դեպքով 600քմ փոսային նորոգման 6սմ հաստությամբ ասֆալտբետոնե շերտի փոման սխեմաները կազմվել

են մի քանի օրով ավելի շուտ քան այդ հատվածների փոսերի կտրման, բիտումապատ խճի տեղադրման և ճամ ասֆալտբետոնի տեղադրման ծածկված աշխատանքների ակտերը: Օրինակ, ԿՄ110+900-Կմ 111+350 հատվածում 100քմ փոսային աշխատանքների ճամ հաստությամբ ասֆալտբետոնի սխեմաները կազմվել են 29. 05. 2019թ, այնինչ համաձայն ծածկված աշխատանքների ակտերի, այդ հատվածում փոսերի կտրման, բիտումապատ խճի տեղադրման և ճամ հաստությամբ ասֆալտապատման աշխատանքներն իրականացվել են 03. 06. 2019թ:

Չկան կմ 115+100-կմ 118+300 հատվածում 2018թ կատարված աշխատանքների ընթացքում ասֆալտբետոնից նմուշառված ասֆալտբետոնե խառնուրդների լաբորատոր հետազոտությունների արդյունքները:

✓ 2018թ. նոյեմբերի 2-ին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ միջև, **հրափայտ բաց մրցույթ** ընթացակարգով, կնքվել է Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Աղբրեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ64+174-կմ67+150 աջակողմյան և ձախակողմյան հատվածների միջին նորոգման աշխատանքների Պետական կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ-3 պայմանագիրը, 313,672.00 հազ. դրամ պայմանագրային գնով, որից 2018թ-ին կատարվելիքը 225,509.00 հազ. դրամ, վճարման ենթակա գումարը 216,433.00 հազ. դրամ և 2018թ. կատարվելիք աշխատանքների ավարտի ժամկետ է սահմանվել 2018թ. դեկտեմբերի 20-ը:

2018թ. դեկտեմբերի 7-ին պատվիրատուն կապալառուի հետ կնքել է Համաձայնագիր թիվ 1-ը, որով, առանց որևէ հիմնավորման, նվազեցրել են 2018 թ-ին կատարվելիք աշխատանքների ծավալը 69,107.00 հազ. դրամով՝ այն սահմանելով 156,402.00 հազ. դրամ: Վճարման ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի փոփոխություն չի կատարվել:

12.12.2018 թ կազմվել է թիվ 1 աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունը 154,821.00 հազ. դրամի:

Հարկ է նշել, որ նշված համաձայնագիրը բացակայում է ՀՀ ֆինանսների նախարարության կայք էջից և էլեկտրոնային գնումների armeps համակարգից: Համաձայն պայմանագրի 8.1 կետի, պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվառված լինելու հանգամանքը:

2018թ. դեկտեմբերի 20-ին կնքել են ևս մեկ համաձայնագիր, այն համարակալելով նորից թիվ 1, որով, չունենալով պայմանագրի կասեցման իրավասություններ, առանց որևէ հիմնավորման, (համաձայն պայմանագրի 8.5 կետի, պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխության յուրաքանչյուր դեպք սահմանում է << կառավարությունը) կասեցրել են պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ. մայիսի 31-ը, սահմանելով աշխատանքների կատարման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր, հաստատել են 2019 թ-ին կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը և ծավալաթերթ նախահաշիվը 158,851.00 հազ. դրամ պայմանագրային գնով: Բացի այդ, պայմանագրով չունենալով կանխավճար տրամադրելու պարտականություն, պատվիրատուն պարտավորվել է 61,612.10 հազ. դրամ փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

2019 թ հունիսի 18-ին կնքվել է համաձայնագիր թիվ 3-ը, որով նվազեցրել են պայմանագրային ընդհանուր գինը և 2019թ-ին կատարվելիք աշխատանքների գինը՝ սահմանելով համապատասխանաբար 302,299.00 հազ. դրամ և 147,478.00 հազ. դրամ և հաստատել են աշխատանքների կատարման նոր ծավալաթերթ նախահաշիվ, օրացուցային գրաֆիկ և վճարման ժամանակացույց, որով 2019թ վճարման ենթակա գումարը սահմանվել է 85,866.00 հազ. դրամ, իսկ աշխատանքների ավարտի ժամկետը, աշխատանքների ծավալի կրճատման պարագայում, առանց հիմնավորման, երկարացվել և սահմանվել է համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, այնինչ համաձայն պայմանագրի 8.6 կետի պահանջի աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարացվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

2019 թ-ի հուլիսի 12-ին կազմվել է 147,478.00 հազ. դրամի հանձնման-ընդունման արձանագրություն թիվ 2-ը, սակայն չի հաշվարկվել ժամկետանց օրերի համար տույժ, այնինչ համաձայն պայմանագրի 3.4.5 կետի, պայմանագրում նշված ժամկետը խախտելու և պատվիրատուի կողմից աշխատանքների կատարման նոր ժամկետ սահմանելու դեպքում, կապալառուն պետք է ապահովի աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացրած օրվա համար վճարի պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժը՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքների 0,05%-ի չափով, ինչը կազմում է 3,052.00 հազ. դրամ:

Այսպիսով, պատվիրատուն պայմանագրի 3.1.2 և 3.1.4 բ) կետով իրեն վերապահված իրավունքներից չօգտվելով, այն է՝ պայմանագրային ժամկետի

խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքների կատարման նոր ժամկետ (ոչ ավել 30 օրացուցային օր), կապալառուից պահանջելով վճարելու պայմանագրով նախատեսված տույժը և այդ ժամկետում աշխատանքները չավարտելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը պահանջելով վճարելու իրեն պատճառած վնասները և նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունը ընդգրկվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պայմանագրով 2018 թ-ին կատարման ենթակա աշխատանքներից 69,107.00 հազ. դրամի աշխատանքները 2019թ տեղափոխելով, ըստ էության երկարաձգել են այդ աշխատանքների կատարման ժամկետը, սակայն այն փաստաթղթավորել որպես 2018թ-ին կատարվելիք աշխատանքների ծավալների նվազեցում և պայմանագրի կասեցում, ինչով հնարավորություն են ընձեռնել ***հրապապ բաց մրցույթի*** արդյունքում հաղթող ճանաչված կապալառուին այդ աշխատանքները պայմանագրով սահմանված 50 օրում կատարելու փոխարեն կատարել 273 օրում, խուսափելով պայմանագրի 3.4.5 և 6.2 կետերով սահմանված տույժերից, որը կազմում է 9,433.00 հազ. դրամ:

✓ «Արհովչին» ՍՊԸ հետ հրատապ բաց մրցույթի ընթացակարգով 30.10.2018թ կնքված թիվ ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ-5 պայմանագրով՝ պայմանագրային գինը 278,000.00 հազ. դրամ, աշխատանքները պետք է ավարտելին 2018թ դեկտեմբերի 17-ին: 2018 թվականին դեկտեմբերի 13-ին կազմել են 60,411.00 հազ. դրամի կատարողական:

Չնայած նրան, որ պայմանագրի 8.6 կետով սահմանվել է, որ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարացվել մինչև պայմանագրով այդ ժամկետի լրանալը, 20.12.2018 թ-ին, աշխատանքների ավարտի պայմանագրով սահմանված ժամկետից 3 օր անց, կնքել են Համաձայնագիր թիվ 1-ը, որով առանց որևէ հիմքի և չունենալով պայմանագրի կասեցման պայմանագրով նախատեսված իրավասություն (*համաձայն պայմանագրի 8.5 կետի, պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխության յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը*), կասեցրել են ***հրապապ բաց մրցույթում*** հաղթող ճանաչված ընկերության հետ կնքված պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ մայիսի 31-ը, սահմանել են աշխատանքները կատարելու նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր՝ ըստ էության երկարացնելով աշխատանքների կատարման ժամկետը 264 օրով, հաստատել են 2019 թ-ին կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը և պայմանագրային գինը 218,586.00 հազ. դրամ: Բացի

այդ, պայմանագրով չունենալով կանխավճար տրամադրելու պարտականություն (վճարումը պետք է կատարվեր միայն կատարված աշխատանքի դիմաց), պատվիրատուն պարտավորվել է 217,589.00 հազ. դրամ փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, ինչը և կատարել է բանկային երաշխիքի հիման վրա 2018թ դեկտեմբերին:

Բանկային երաշխիքի ժամկետը եղել է մինչև 30.06.2019թ-ը, սակայն մինչև օրս այդ աշխատանքները չեն ընդունվել պատվիրատուի կողմից (ընդունվել է միայն 60,411.00 հազ. դրամի աշխատանք), և ավելի վճարված 157,178.00 հազ. դրամ գումարը և աշխատանքների ուշացման համար պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը չի հաշվարկվել և հետ չի գանձվել:

Աշխատանքներն իրենց ֆիզիկական ծավալներով փաստացի տեղում ամբողջությամբ կատարված են, սակայն պատվիրատուն ընդունել է միայն 60,411.00 հազ. դրամի աշխատանքները: Որևէ բացատրություն կամ պարզաբանում մնացած աշխատանքները չընդունելու փաստով պատվիրատուն հաշվեքննության ընթացքում չի ներկայացրել: Ավելին, չի ներկայացրել նաև փաստացի տեղում կատարված, սակայն չընդունված աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով կազմված ծածկված աշխատանքների ակտերը, պահանջվող լաբորատոր հետազոտությունների արդյունքները՝ այդ թվում ասֆալտբետոնե խառնուրդների և ասֆալտբետոնե ծածկից հանուկների լաբորատոր հետազոտության արդյունքները և ասֆալտբետոնի արտադրության բաղադրատոմսը:

Պայմանագրով, կատարված աշխատանքները չընդունելու մեկ դեպք է սահմանված, այն է՝ եթե աշխատանքի արդյունքը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին և ծավալաթերթ նախահաշվին (կետ 3.1.3):

Այսպիսով, պատվիրատուն պայմանագրի 3.1.2 և 3.1.4 կետի բ) և գ) կետով իրեն վերապահված իրավունքներից չօգտվելով, այն է՝ չընդունել աշխատանքի արդյունքը՝ իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը կամ 6.3 կետով նախատեսված տուգանքը, կատարված աշխատանքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու և կապալառուի կողմից պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու հիմքերով միակողմանի լուծել պայմանագիրը պահանջելով վճարելու իրեն պատճառած վնասները և նախաձեռնել գործընթաց, որ այդ ընկերությունը ընդգրկվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետում ծ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պայմանագիրը կասեցնելով և 218,586.00 հազ. դրամի աշխատանքները 2019թ տեղափոխելով, ըստ էության երկարաձգել է այդ աշխատանքների կատարման ժամկետը, սակայն այն փաստաթղթավորել որպես պայմանագրի կասեցում, ինչով հնարավորություն է ընձեռնել կապալառուին խուսափել պայմանագրի 3.4.5 և 6.2 կետերով սահմանված տույժերից, որը կազմում է 28,853.00 հազ. դրամ:

6.2.13 (1049-11001) Առկա է անհամապատասխանություն Կապալային աշխատանքների կատարման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական պայմանագրերում և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում սահմանված երաշխիքային ժամկետների միջև

2017թ-ին «Հուսալի Կամար» ՍՊԸ հետ կնքված տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 2-1-ով ճանապարհային հիմքի երաշխիքային ժամկետը սահմանվել է 15 տարի, պատվածքի ստորին շերտինը՝ 10 տարի, պատվածքի վերին շերտինը՝ 6 տարի և պայմանագրի 2.4.5 կետով սահմանվել է, որ եթե նշված ժամկետներում ի հայտ են եկել թերություններ, ապա կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացրած փաստացի ծախսերի չափով: Իսկ ահա Կապալային աշխատանքների կատարման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման բոլոր թվով 5 պետական պայմանագրերում աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվել մեկ տարի, ինչի արդյունքում պահպանման աշխատանքների պայմանագրային գինը հաշվարկելիս ճանապարհի վիճակը միայն մեկ տարի է գնահատվել երաշխիքային:

6.2.14 Առկա է անհամապատասխանություն շինարարության որակի տեխնիկական հսկողության պայմանագրի կնքման և այդ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ժամանակահատվածների միջև

Չնայած նրան, որ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հետ կնքվել է 2017թ-ի նոյեմբերի 21-ին, ընկերության աշխատակիցների կողմից մինչև 2017թ նոյեմբերի 21-ը ստորագրվել են շուրջ 100 հատ ծածկված աշխատանքների ակտեր (2017թ հոկտեմբերի 30-ով, նոյեմբերի 1-ով, 2-ով, 3-ով, 6-ով և այլն), իսկ կապալառուների կողմից իրականացվել են ասֆալտբետոնե խառնուրդի նմուշների լաբորատոր հետազոտություններ 2017թ նոյեմբերի 9-ին, 10-ին, 13-ին և այլն:

6.2.15 Առկա է անհամապատասխանություն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.2 կետի պահանջի հետ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8.2 կետի պահանջի ճանապարհային պատվածքի կոնստրուկցիան եւ նրա ծածկի տեսակը պետք է ընտրել, ելնելով տրանսպորտային միջոցների ու ճանապարհի շահագործման պահանջներից, ճանապարհի կարգից՝ հաշվի առնելով երթեւեկության ինտենսիվությունն ու կազմը, կլիմայական պայմաններից, սանիտարա-հիգիենիկ պահանջներից, ինչպես նաեւ կառուցման շրջանի տեղական շինանյութերով ապահովվածությունից:

Նախագծային աշխատանքների պայմանագրերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվել է ճանապարհների տեխնիկական կարգը թողնել անփոփոխ, սակայն չի նշվել ճանապարհի տեխնիկական կարգը: Կարգը չի նշվել նաև նախագծում: Առանձին դեպքերով նախագծով նախատեսվել է պատվածքի հետևյալ շերտերը 10սմ հաստությամբ ավազակոպճից հիմքի լրացուցիչ շերտ, 16սմ հաստությամբ բիտումով տոգորված խճի հիմքի շերտ, 6սմ հաստությամբ ստորին խոշորահատիկ ասֆալտբետոնյա ծածկի շերտ և 4սմ հաստությամբ մանրահատիկ ասֆալտբետոնյա վերին շերտ:

6.2.16 (1049-11001) Առկա են անհամապատասխանություններ ՀՀՇՆ IV-11.05.02-99 14.70 կետի պահանջի հետ

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99 14.70 կետի <Ստորին շերտը մշակման չեն ենթարկում այն դեպքում, երբ վերին շերտը տեղադրում են 2 օրից ոչ ավելի ուշացումով՝ պայմանով, որ տրանսպորտի երթևեկություն տեղի չի ունեցել:

Ա/ճ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ202+200-կմ204+400 հատվածի միջին նորոգման օբյեկտում 6 դեպքով վերին շերտի ա/բ խառնուրդի նմուշը լաբորատորիա է ներկայացվել ա/բ խառնուրդի հարթեցնող շերտի տեղադրման աշխատանքների իրականացումից 7-8 օր հետո, օրինակ՝ կմ 202+400-ից և ԱԲԳ-ից նմուշը հետազոտության է ներկայացվել 01. 12. 2017թ. , այն դեպքում,

երբ համաձայն ծածկված աշխատանքների ակտերի այդ հատվածում հարթեցնող շերտն իրականացվել է 23.11.2017թ-ին: Մանրամասն տե՛ս հավելված 9-ում:

6.2.17 (1049-11001) Առկա են անհամապատասխանություն պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական պայմանագրերի հավելված 1-ի պահանջի հետ

2017թ.-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական պայմանագրերի հիման վրա 2018-2019թթ ճանապարհների ամառային պահպանության և ձմեռային պահպանության աշխատանքներն իրականացնելու համար կնքված համաձայնագրերում աշխատանքների միավորի գները բարձր են ընդունվել պայմանագրերի հավելված 1-ում սահմանված գներից, ինչի արդյունքում համաձայնագրերի գները ավել են հաշվարկվել 1,771.00 հազ.դրամով:

6.2.18 (1049-11001) Պարբերական պահպանում (միջին նորոգում) ծրագրի շրջանակում իրականացված գնումներ

Հաշվեքննվող ժամանակաշրջանում կազմակերպվել են թվով 10 գնման ընթացակարգեր, որոնց արդյունքում կնքվել են թվով 29-ը պայմանագրեր: Թվով 10 գնման ընթացակարգերից մեկը կազմակերպվել է 2017թ-ին, երկուսը՝ 2018թ-ին և 7-ը՝ 2019թ-ին: Մեր կողմից հաշվեքննվել են իրականացված գնման ընթացակարգերի համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջներին: Բոլոր՝ թվով 10 գնման ընթացակարգերում առկա են անհամապատասխանություններ, որոնք մանրամասն ներկայացված են հավելված 10-ում:

6.2.18.1 Առկա է անհամապատասխանություն Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների հետ

Գնումների գործընթացը կազմակերպվել է հիմք ընդունելով Օրենքով նախատեսված՝ մրցույթ ընթացակարգի բաց մրցույթ տեսակը: Օրենքի 20-րդ

հողվածի 2-րդ մասի համաձայն հայտերի ներկայացման ժամկետը սահմանված է առնվազն 40 օրացուցային օր (գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից): Սակայն 2018թ և 2019թ իրականացված գնումների դեպքում, կիրառվել է ավելի քիչ ժամկետ՝ առնվազը 15 օրացուցային օր, չնայած այն բանի, որ Օրենքի նույն հողվածի 4-րդ մասի համաձայն, նման ժամկետ կիրառվում է միայն, եթե գնման անհետաձգելի պահանջը ծագել է արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով, և 40 օրացուցային օրյա ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել: 2019թ-ին մրցույթները հայտարարվել են ապրիլ, մայիս և հունիս ամիսներին, իսկ միջին նորոգման ենթակա օբյեկտների ցանկը հաստատվել է դեռևս փետրվարի 1-ի՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի (այսուհետ՝ Նախարար) թիվ 73-Ա հրամանով: 2018թ-ին մրցույթը հայտարարվել է սեպտեմբեր ամսին, իսկ նշված գումարը նախատեսված է եղել պետական բյուջեի տարեկան պլանով, և համաձայն ՀՀ կառավարության 28.12.2017թ թիվ 1717-Ն որոշման 17-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության՝ Նախարարը պետք է հաստատեր և հրապարակեր 2018թ միջին նորոգման ծրագրով նախատեսված գումարների բաշխումը ըստ օբյեկտների: Իրականացված 10 մրցույթներից 9-ում առկա է նշված անհամապատասխանությունը:

6.2.18.2 Առկա է անհամապատասխանություն Որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջների հետ

ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/19Շ ծածկագրով մրցույթի շրջանակում կազմվել և հրապարակվել է ընտրված մասնակից ճանաչելու մասին նիստի թիվ 4 արձանագրության երկու տարբերակ՝ ստորագրված հանձնաժողովի նույն կազմի կողմից՝ 10.10.2018թ-ին և 17.10.2018թ-ին: Որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում: Վերջին տարբերակի՝ 17.10.2018թ-ին կազմված թիվ 4 արձանագրության դեպքում, առաջանում է անհամապատասխանություն, քանի որ հայտերի բացման ամսաթիվը եղել է 27.09.2018թ-ը: Նմանատիպ անհամապատասխանություն առկա է նաև ՏԿՆ-ՀԲՄԱՇՁԲ-2018/20Շ ծածկագրով մրցույթի պարագայում՝ 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժիններով հայտերի գնահատումն իրականացվել է 12 աշխատանքային օրվա ընթացքում, 3-րդ չափաբաժնով՝ 14 աշխատանքային օրվա ընթացքում:

6.2.18.3 Առկա է անհամապատասխանություն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների հետ

Համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/15Շ ծածկագրով մրցույթի դեպքում անգործության ժամկետը լրացել է 03.08.2019թ-ին, իսկ ընտրված մասնակիցը ծանուցվել է 12.08.2019թ-ին է:

6.2.18.4 Առկա է անհամապատասխանություն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ

Համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/5Շ ծածկագրով մրցույթի դեպքում ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցվել է 03.06.2019թ-ին, սակայն պայմանագիրը կնքվել է 28.06.2019թ-ին՝ ավելի ուշ, քան Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրը:

6.2.18.5 Առկա է անհամապատասխանություն որոշման 43-րդ կետի պահանջների հետ

Որոշման 43-րդ կետի համաձայն, հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հրապարակում է նիստի արձանագրությունը և նիստին ներկա հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը: 5 դեպքով նշված փաստաթղթերը հրապարակվել են ավելի ուշ, իսկ 1 դեպքով՝ մրցույթը հայտարարվել է 16.04.2019թ-ին, հայտերի բացման և գնահատման նիստը կայացել է 02.05.2019թ-ին, սակայն շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը կազմված է եղել շատ ավելի վաղ՝ 04.04.2019թ-ին, դեռևս մրցույթը հայտարարվելուց 12 օր առաջ:

6.2.18.6 Առկա է անհամապատասխանություն Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների հետ

Համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: 3 դեպքով անգործության ժամկետը սկսվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման նույն օրը կամ ավելի վաղ:

6.2.18.7 Առկա է անհամապատասխանություն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ

Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ կնքված պայմանագրի մասին հայտարարություն հրապարակվում է ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը: 7 դեպքով կնքված պայմանագրի մասին հայտարարություն հրապարակվել է ավելի ուշ:

7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

7.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ

7.1.1 (1049-11001) Ձյան տեղումների բացակայության պայմաններում կատարողականներից չեն կատարել համապատասխան նվազեցումները

Կարգի 28-րդ հոդվածի համաձայն ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածում ընդունվում և վճարվում են միայն այն աշխատանքների տեսակները, որոնք փաստացի կատարվել են ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների ապահովման համար՝ սույն կարգի Աղյուսակ 4-ում բերված տոկոսային հարաբերությամբ (օրինակ՝ ձյան տեղումների բացակայության դեպքում և մերկասառույցի առկայության դեպքում ընդունվում և վճարվում են միայն այն աշխատանքները, որոնք փաստացի կատարվել են սույն կարգի Աղյուսակ 3-ի «2» ենթաաղյուսակի 2.2 (երթևեկելի մասի վրա մերկասառույցի կամ տրորված-պնդացած ձյունմշակում աղ-ավազով) և 3.1.1 (սառույցով խցանված ջրթող հարմարանքների բացում) կետերում նշված չափանիշները ապահովելու նպատակով: Վճարումը կատարվում է Կարգի N 4 աղյուսակում բերված տոկոսային հարաբերակցությամբ՝ հիմք ընդունելով 2.2 և 3.1.1 կետերի մասնաբաժինները այն 56% է:

Մեր արտաքին հարցմանը ի պատասխան, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի 21.05.2018թ-ի թիվ 7.2/17.9/5859-18 և 21.01.2020 թ-ի թիվ 08-20 գրություններով տրամադրած տեղեկատվության, 2017թ մարտին թվով 14, նոյեմբերին թվով 11, դեկտեմբերին թվով 8, 2018 թ-ի հունվարին թվով 3, փետրվարին թվով 9, մարտին թվով 10, նոյեմբերին թվով 13, դեկտեմբերին թվով 7, 2019թ փետրվարին թվով 7 մարտին թվով 6, նոյեմբերին թվով 12 և դեկտեմբերին թվով 7 տարածաշրջաններում ձյան տեղումներ չեն գրանցվել և ձյան ծածկույթ չի եղել, հետևաբար այդ տարածաշրջանների տվյալ ժամանակահատվածների ձմեռային պահպանության կատարողական ակտերի գումարները, համաձայն Կարգի 28-րդ հոդվածի պահանջի, պետք է նվազեցվեին 44%-ով ինչը չի կատարվել և ինչի արդյունքում

ավել է հաշվարկվել և վճարվել **122,474,00 հազ. դրամ** (մանրամասն տես հավելված 11):

7.1.2 (1049-11001) Պահպանություն իրականացնող ընկերությունների հետ կնքել են ճանապարհահատվածների փոսային նորոգման աշխատանքների կատարման պայմանագրեր այն դեպքում, երբ այդ աշխատանքներն արդեն իսկ ներառված են պահպանման աշխատանքների կազմում: Աշխատանքների ավարտից հետո ճանապարհների վիճակը չի գնահատվել «երաշխիքային»

Համաձայն Կարգի 11-րդ կետի 1-ին և 5-րդ ենթակետերի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի ճանապարհահատվածի վիճակը հիմնանորոգման կամ վերակառուցման աշխատանքների ավարտից հետո գնահատվում է երաշխիքային մինչև տվյալ ճանապարհահատվածի հիմնանորոգման կամ վերակառուցման պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետի ավարտը: Երաշխիքային ժամկետի ավարտից հետո տվյալ ճանապարհահատվածի վիճակը գնահատվում է որպես լավ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8-րդ մասի՝ ճանապարհային պատվածքը բաղկացած է ճանապարհային **ծածկից և հիմքից**:

Համաձայն ՀՀ կառավարության 2015թ-ի թիվ 596-Ն որոշման, հիմքով փոսային նորոգման աշխատանքները չեն հանդիսանում ընթացիկ նորոգման աշխատանքներ, քանի որ համաձայն նույն որոշման հավելված 4-ի 7-րդ կետի 11-րդ ենթակետի ժդ) կետի ընթացիկ նորոգման աշխատանքներ են համարվում ավտոմոբիլային ճանապարհների **ծածկի** փոսային նորոգման աշխատանքները:

2017թ-ի ՀՀ պետական բյուջեի «Պետական նշանակության ավտոճանապարհների **հիմնանորոգում**» ծրագրով թվով 10 օբյեկտներում իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ՝ երթևեկելի մասի **հիմքով** փոսային նորոգման, 5սմ հաստությամբ համատարած ասֆալտապատման, բիտումի լցաբաշխումով խճային շերտի կառուցման, կողնակների վերականգնման աշխատանքներ, մեկ տարի երաշխիքային ժամկետով, սակայն խախտելով Կարգի 10-րդ և 11-րդ կետերի պահանջները ճանապարհների վիճակները 2018թ,-ին չեն գնահատել երաշխիքային, իսկ 2019թ,-ին լավ, այլ թողել են նույն վիճակը ինչ վերանորոգման աշխատանքներից առաջ, ինչի արդյունքում 2018 թ-ի կատարողականներով ավել է հաշվարկվել և վճարվել **56,091.00 հազ. դրամ**, իսկ 2019 թ-ին **21,997.00 հազ. դրամ**: Հարկ է նշել, որ վերանորոգման աշխատանքներն

իրականացրել են այդ ճանապարհահատվածների պահպանման աշխատանքներն իրականացնող նույն կապալառու ընկերությունները, որոնց պահպանության պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների մեջ արդեն իսկ մտնում էին վերանորոգման աշխատանքների պայմանագրերում ներառված աշխատանքների իրականացումը կամ նույն աշխատանքները նույն կապալառուներին պատվիրվել են կրկնակի և պահպանման պայմանագրերով նախատեսվածից վերանորոգման պայմանագրերով ավել է վճարվել **185,339.00 հազ. դրամ** (մանրամասն տես հավելված 12-ը):

7.1.3 (1049-11001) Առանց ճանապարհների վրա վերանորոգման աշխատանքներ կատարելու արհեստականորեն բարձրացրել են ճանապարհի վիճակի նկարագիրը

Համաձայն «Կարգ»-ի 10-րդ հոդվածի պահանջների, ավտոմոբիլային ճանապարհի խմբի փոփոխությունը դեպի ավելի բարձր խումբ կատարվում է միայն տվյալ ավտոմոբիլային ճանապարհի միջին, հիմնական նորոգումից կամ վերակառուցումից հետո:

Նախկինում «վատ» գնահատված (փոսայնությունը մեծ 3%-ից) Հանրապետական նշանակության թվով 2 ճանապարհահատվածների խումբը, առանց այդ ճանապարհահատվածներում միջին, հիմնական նորոգման կամ վերակառուցման աշխատանքներ իրականացնելու, հաջորդ տարում փոփոխվել են դեպի ավելի բարձր խումբ՝ «լավ» (փոսայնությունը 0%-0,5%) կամ բավարար (փոսայնությունը 0,5%-3%) վիճակի և դրանք ներառվել են պահպանման համաձայնագրերում որպես «լավ» կամ «բավարար» վիճակի ավտոճանապարհներ: Համաձայն «Կարգ»-ի 10-րդ հոդվածի պահանջների, ավտոմոբիլային ճանապարհի խմբի փոփոխությունը դեպի ավելի բարձր խումբ կատարվում է միայն տվյալ ավտոմոբիլային ճանապարհի միջին, հիմնական նորոգումից կամ վերակառուցումից հետո, հետևաբար նշված ճանապարհահատվածները պետք է պահպանման հանձնվեին որպես «վատ» վիճակի ճանապարհներ «թույլատրելի» պահպանման մակարդակով, որի գինը կազմում է «բավարար» պահպանման մակարդակի գնի 44.8%-ը¹: Կատարողականներով այդ ճանապարհահատվածների

¹ Համաձայն Կարգ-ի 32-րդ կետի, «թույլատրելի» պահպանման մակարդակը նախատեսում է «բավարար» մակարդակի բոլոր պահանջները, բացի ճանապարհային ծածկին ներկայացվող պահանջներից՝ որին ներկայացվում է կոպճային կամ խճային նյութերի կիրառմամբ կամ հարթեցման աշխատանքների միջոցով երթևեկամասի բավարար անցանելիությունը պահանջ: Համաձայն Կարգ-ի թիվ 4 աղյուսակի ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում, բացի ծածկից (երթևեկելի մասից) մնացած աշխատանքների

պահպանման համար ավելի են հաշվարկվել և վճարվել **6,742.00 հազ. դրամ** (մանրամասն տես հավելված 13):

7.1.4 (1049-11001) Համաձայնագրերում ավելի ցածր պահպանման մակարդակի համար կիրառվել են մեկ կամ երկու մակարդակով ավելի բարձր մակարդակի պահպանման պայմանագրային գներ:

Կարգում ավտոմոբիլային ճանապարհների պահպանման նորմատիվային մակարդակներում «թույլատրելի» մակարդակը ավելացվել է ՀՀ կառավարության 29.09.2016թ-ի թիվ 1008-Ն որոշմամբ, այդ իսկ պատճառով 2014թ և 2015թ կնքված պահպանման պայմանագրերում բացակայում են ավտոմոբիլային ճանապարհների պահպանման «թույլատրելի» մակարդակի պայմանագրային գները:

2018թ և 2019թ համար կատարված ավտոճանապարհների վիճակների գնահատմամբ Հ36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար ճանապարհի 21.2 կմ հատվածի և Հ38, Հ30-Թթուջուր-Նավուր-Հ36 40.1 կմ երկարությամբ ճանապարհի վիճակը գնահատվել է «հանրապետական վատ» և 2014թ կնքված պայմանագրերի շրջանակներում 2018-2019թթ կնքված համաձայնագրերով պահպանման են հանձնվել «թույլատրելի» պահպանում պահանջող մակարդակով (Տավուշի տարածաշրջան), սակայն Հ36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար-ի դեպքում կիրառվել են «հանրապետական բավարար» ճանապարհահատվածի «բավարար» պահպանման մակարդակի միավորի գները, իսկ Հ36, Հ30-Թթուջուր-Նավուր-Հ36-ի դեպքում կիրառել են «հանրապետական բավարար» ճանապարհահատվածի «միջին» պահպանման մակարդակի միավորի գները, ինչը «թույլատրելի» պահպանման մակարդակից երկու մակարդակով բարձր պահպանման մակարդակ է, որին ներկայացվող պահանջները ավելի բարձր են քան «բավարար» պահպանման մակարդակին ներկայացվող պահանջները: Ինչպես արդեն նշել ենք վերևում, «թույլատրելի» պահպանման մակարդակի գները կազմում են «բավարար» պահպանման մակարդակի գների ընդամենը 44.8%-ը, հետևաբար, պատվիրելով «թույլատրելի» պահպանման մակարդակ, սակայն կիրառելով ավելի բարձր մակարդակների՝ «բավարար» և «միջին» պահպանման մակարդակի գները, 2018-2019թթ կատարողականներով ավելի են հաշվարկվել և **վճարել 75,723.20 հազ. դրամ**, որից Հ36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար 21.2 կմ ճանապարհի

արժեքը կազմում է 40%-ը: Հաշվի առնելով նաև այն, որ ավագակոպիճով կամ խճով փոսային նորոգման աշխատանքի նախահաշվային արժեքը կազմում է ասֆալտբետոնով փոսային նորոգման արժեքի 8%-ը գների հարաբերակցությունը կկազմի 44.8%:

պահպանման համար 24,407.80 հազ. դրամ և Հ36, Հ30-Թթուջուր-Նավուր-Հ36-ի համար 51,315.20 հազ. դրամ:

7.1.5 (1049-11001) Կատարողականներով չեն նվազեցրել ճանապարհահատվածի այն էլեմենտների պահպանման արժեքները, որոնք պահպանությունը չի իրականացվել ընկերությունների կողմից

ՀՀ կառավարության 13.02.2014թ-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից: **Գյումրու, Վանաձոր և Վաղարշապատ քաղաքների** տարածքներում գտնվող՝ ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածները չեն ներառվել 2017-2019թթ ձմեռային և ընթացիկ պահպանման աշխատանքների համաձայնագրերում, իսկ **Կապան, Իջևան և Արմավիր քաղաքների** տարածքներում գտնվող 21.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհները ընդգրկվել են ձմեռային և ընթացիկ պահպանման համաձայնագրերում: Կարգի համաձայն ճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները, բացի երթևեկելի մասը, ներառում են նաև հողային պաստառը և օտարման շերտը, արհեստական կառուցվածքները և կահավորանքը: Համաձայն նույն Կարգի աղյուսակ 4-ի, ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում ծածկը (երթևեկելի մասի) կազմում է ընդամենը 60%-ը, իսկ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ՝ 80%-ը: Համաձայն նույն Կարգ-ի 28-րդ և 29-րդ կետերի ընդունվում և վճարվում են միայն այն աշխատանքների տեսակները, որոնք փաստացի կատարվել են ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշների ապահովման համար՝ Կարգ-ի Աղյուսակ 4-ում բերված տոկոսային հարաբերությամբ, հետևաբար նշված ճանապարհների ամառային պահպանման աշխատանքների համար պետք է վճարվեր պայմանագրային գնի 60%-ը, իսկ ձմեռայինի դեպքում՝ 80%-ը, այնինչ վճարվել է ամբողջությամբ, կամ 2017-2019թթ ավել է վճարվել **45,800.00 հազ. դրամ** (15,271.2 x 3 տարի): Մանրամասն տես հավելված 14-ում:

7.1.6 (1049-11001) Կատարողականներից չեն նվազեցրել ճանապարհահատվածների հիմնանորոգման մեջ գտնվելու ժամանակահատվածների համար նախատեսված գումարները

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ընթացիկ ամառային պահպանման մակարդակի գնահատման ենթակա չեն այն ճանապարհահատվածները՝ որոնք գնահատման ժամանակ ենթարկվում են հիմնանորոգման կամ վերակառուցման:

2017թ ընթացքում 161.3 կմ ճանապարհահատվածների վրա իրականացվել է հիմնանորոգման, միջին նորոգման և անցանելիության ապահովման աշխատանքներ: 2018թ ընթացքում՝ 112.7 կմ-ի վրա, և 2019թ ընթացքում՝ 317.3 կմ-ի վրա: Վերոհիշյալ աշխատանքները իրականացնելու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել է պահպանության գումարների նվազեցումներ, սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ նվազեցումները կատարվել են **13,978.00 հազ. դրամով** պակաս (ըստ կապալառուների և ճանապարհների հաշվարկը տես հավելված 15):

7.1.7 (1049-11001) Պայմանագրերում և կատարողականներում ավելի են ընդունել ճանապարհահատվածների երկարությունները

ՀՀ կառավարության 29.03.2019թ թիվ 383-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների նոր անվանացանկը՝ դասակարգված ըստ նշանակության, համաձայն որի ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 17,54.22 կմ, իսկ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը 1,988.8 կմ: Համաձայն նոր անվանացանկի որոշ ճանապարհահատվածների երկարությունը ճշգրտվել է: Այսպես, Հ10, Մ2-Մ8-Ոսկետափ-Վեդի-Լանջառ-Մ2 և Ոսկետափի տրանսպորտային հանգույց-Հ8/ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 42.4 կմ նախկինում ցույց տրված 43.6 կմ-ի փոխարեն կամ նախկինում երկարությունը փաստացի երկարությունից ավելի է ցույց տրվել 1.2 կմ-ով: Հ 11, Մ2-Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 ճանապարհի ընդհանուր երկարությունը նախկինում ցույց տրված 16.1 կմ-ի փոխարեն սահմանվել է 15.3 կմ կամ նախկինում փաստացի երկարությունը ավել է ցույց տրվել 0.8 կմ: 2017-2019թթ կնքված համաձայնագրերում և կատարողականներում նշված ճանապարհների երկարությունները ցույց են տրվել համապատասխանաբար 43.6 կմ և 16.1 կմ,

այնինչ փաստացի պահպանություն իրականացվել է 42.4 կմ-ի և 15.3 կմ-ի վրա կամ կատարողականներով ավելի է հաշվարկվել և վճարվել 1.9 կմ ավտոճանապարհների պահպանման գումար **7,592.60 հազ. դրամի չափով:**

7.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման)

7.2.1 (1049-11001) Կատարողականներով ընդունվել են աշխատանքներ, որոնք ենթակա էին մերժման

«Արգիշտի 1» ՍՊԸ-ի կողմից 2019թ,-ին Ա/6 Մ-7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ19+000- կմ27+000 հատվածում իրականացրած միջին նորոգման աշխատանքների շրջանակներում կառուցված ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի հանուկների լաբորատոր հետազոտության արդյունքների համաձայն թվով 3 լրակազմ հանուկների միջին խտությունները կազմել են համապատասխանաբար 0.940, 0.950 և 0.953: Համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 14.77 կետի պահանջների, ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի խտացման գործակիցը պետք է լինի ոչ պակաս, քան 0,99 հետևաբար 3 լրակազմին համապատասխանող 21,000 քմ ասֆալտբետոնե վերին շերտի աշխատանքները գումարով 96,012.00 հազ. դրամի պետք է մերժվեն:

7.2.2 (1049-11001) Ճանապարհաճածկույթի ողորկության ցուցանիշների շեղումը գերազանցել է թույլատրելի նորման

Համաձայն «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից Ա/6 Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, կմ118+300-կմ129+100 հատվածի միջին նորոգման աշխատանքների շրջանակներում կառուցված ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի պատվածքի ողորկության (հարթության) չափման արձանագրության, 3 դեպքով (300մ հատվածում) արձանագրված ցուցանիշները չեն համապատասխանել ՀՀ IV-11.05.02-99-ի 8.31 կետով և աղյուսակ 34-ով սահմանված ցուցանիշներին, հետևաբար համաձայն ՀՀ կառավարության 29.09.2016թ N38-22 արձանագրային որոշման, պետք է նվազեցվեր 313.00 հազ. դրամ, ինչը չի կատարվել:

8. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

8.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ

8.1.1 Հ32, Մ1-Գյումրի-Կապս-Ամասիա-Մ1 ճանապարհահատվածի կմ 1.1 – կմ 14.2 հատվածը 2015թ-ին կայացած գնման փաթեթներում ներառվել է Ախուրյանի տարածաշրջանի լոտում: Նշված տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հետ, որն աշխատանքներն իրականացրել է յուրաքանչյուր տարի կնքված համաձայնագրերի շրջանակներում: 2017թ-ին կնքված համաձայնագրերում վերոնշյալ ճանապարհահատվածի կմ 12.1–կմ 14.2 հատվածը /2.1 կմ/, առանց որևէ հիմնավորման, չի ներառվել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հետ կնքված համաձայնագրում, այն ներառվել է Ամասիայի տարածաշրջանի ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանումն իրականացնող «Աշոցքի ԱՏՃ» ՓԲԸ-ի համաձայնագրում՝ այդ ընկերության առաջարկած ավելի բարձր պայմանագրային գներով: Արդյունքում, 2.1 կմ ճանապարհահատվածի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման համար նախատեսված և վճարված գումարը 2017-2019թթ ավելացել է **8,374.00 հազ. դրամով** (տարեկան 2,791.30 հազ. դրամ):

8.1.2 2015թ դեկտեմբերին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև կնքված թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24» պետության համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը 2017թ դեկտեմբերին լուծվել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով: 2017թ դեկտեմբերին կայացած մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի և «Ճամբարակի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կոնսորցիումը և 29.01.2018թ կնքվել է պետության համար ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման

աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր: Հարկ է նշել, որ 2018թ պայմանագրային գինը՝ 102,000.00 հազ. դրամը 2017թ-ի 75,802.00 հազ. դրամի համեմատությամբ, անփոփոխ ծավալների պայմաններում (ծմեռային պահպանում 56.8 կմ, ամառային պահպանում 43.3 կմ), ավելացել է **26,198.00 հազ. դրամով**, կամ 34.5%-ով:

8.1.3 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի VII գլխի 33-րդ կետի 10-րդ մասի բ) ենթամասի պահանջի, նախագծողը պետք է ներկայացնի կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, ինչը նախագծային կազմակերպությունների կողմից չի կատարվել: Պետական բյուջեի միջոցներով կառուցված ճանապարհների պայմանագրերում պահպանման երաշխիքային ժամկետները սահմանվել են 3 տարի, իսկ վարկային ծրագրերով և միջին նորոգումների ենթածրագրով՝ մեկ տարի կամ նոր ճանապարհի կառուցումից ընդամենը մեկ տարի անց այդ ճանապարհի վիճակը «երաշխիքայինից» փոխվելու է և գնահատվելու է «լավ» վիճակի ինչը ենթադրում է նոր ճանապարհի կառուցումից ընդամենը մեկ տարի անց ճանապարհածածկույթին մինչև 0.03 տոկոսի չափով փոսերի առկայություն: Ընդ որում «լավ» վիճակի գնահատված ավտոճանապարհների 1 կմ-ի պահպանման գինը 45%-ից մինչև 206% -ով բարձր է «երաշխիքային» վիճակի գնահատված ճանապարհի պահպանման գնից: Օրինակ՝ 2017թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կնքված միջին նորոգման պայմանագրերով նախատեսվել է Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ճանապարհի 16.8 կմ հատվածը վերակառուցել՝ իրականացնել ավազակոպճային շերտի, խոշորահատիկ և մանրահատիկ ասֆալտբետոնի շերտի կառուցում: Կնքված պայմանագրերի համաձայն միջին նորոգումից հետո վերանշյալ ճանապարհահատվածները պահպանման երկրորդ տարվանից սպասարկվելու են որպես «միջպետական լավ» և արդյունքում 16.8 կմ հատվածի տարեկան պահպանման գումարը ավելացել է 6,426.90 հազ. դրամով:

8.1.4 Միևնույն ճանապարհի տարբեր հատվածների պահպանման գները նույն խմբի և նույն պահպանման մակարդակի պայմաններում էականորեն տարբերվում են միմյանցից: Օրինակ՝ Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Ադր. սահման Կապանի և Մեղրու տարածաշրջանների ՄԼ(II-IV) խմբի «լավ» պահպանման մակարդակի 1 կմ-ի ամառային պահպանության գինը կազմում է 678.30 հազ. դրամ, Եղեգնաձորի տարածաշրջանի համար՝ 807.00 հազ. դրամ,

կամ 128.70 հազ. դրամով ավելի, Վայքի տարածաշրջանի համար՝ 857.40 հազ. դրամ, կամ 179.10 հազ. դրամով ավելի, Սիսիանի տարածաշրջանի համար՝ 1030.00 հազ. դրամ, կամ 351.70 հազ. դրամով ավելի, Գորիսի տարածաշրջանի համար՝ 1034.20 հազ. դրամ, կամ 355.90 հազ. դրամով ավելի: Կապանի և Մեղրու տարածաշրջանների ՄԲ (II-IV) խմբի «միջին» պահպանման մակարդակի 1 կմ-ի ամառային պահպանության գինը կազմում է 1,485.30 հազ. դրամ, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանի համար՝ 1,649.00 հազ. դրամ, կամ 163.70 հազ. դրամով ավելի, Վայքի տարածաշրջանի համար՝ 1,555.50 հազ. դրամ, կամ 70.20 հազ. դրամով ավելի, Սիսիանի տարածաշրջանի համար՝ 1,706.00 հազ. դրամ, կամ 220.70 հազ. դրամով ավելի, Գորիսի տարածաշրջանի համար՝ 1,700.70 հազ. դրամ, կամ 215.40 հազ. դրամով ավելի: Ընդ որում, թանկ սպասարկվող ճանապարհների միջին լայնությունը (հետևաբար ճանապարհաձածկույթի մակերեսը) էականորեն փոքր է ցածր գնով սպասարկվող ճանապարհների լայնությունից: Այսպես, Կապանի տարածաշրջանի ճանապարհի միջին լայնությունը կազմում է 8.9 մ, Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների ճանապարհահատվածի միջին լայնությունը կազմում է 7.2 մ, Եղեգնաձորի տարածաշրջանի ճանապարհահատվածի միջին լայնությունը կազմում է 9.5 մ:

8.1.5 Նախարարության և կապալառուների միջև կնքված պայմանագրի հավելված 1 (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց)–ի 3 կետի 3 ենթակետով որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառու պարտավոր է իրականացնել պարսպող համակարգերի շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, արտաքին մակերևույթի վրա առաջացած թերությունների, վթարների կամ թափվածքների, սողանքների ու սելավների հետևանքով առաջացած վնասվածքների վերացման աշխատանքները: Սակայն, համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի N 79-Ն հրամանով հաստատված մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների և դրանց ընդունման կարգի III մասի 9-րդ կետի՝ բնական աղետների (երկրաշարժ, սելավներ, գետերի վարարում, փլուզումներ, սողանքներ, խոշոր հրդեհներ, ձնահոսքեր) արդյունքում վնասված պարսպող համակարգերի վերականգնումը չի հանդիսանում պարսպող հարմարանքների պահպանումն իրականացնող կապալառուի պարտավորությունը:

8.2 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պարբերական պահպանում (միջին նորոգման)

8.2.1 2017թ-ի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքների մրցույթը «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն շահել է այդ աշխատանքների համար ՀՀ կառավարության 2011 թ-ի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ով սահմանված նախահաշվային արժեքից՝ 29,665.00 հազ. դրամից 99 անգամ էժան գնով՝ 300.00 հազ. դրամով: Առանձին օբյեկտի տեխնիկական հսկողության գինը սահմանվել է 60.00 հազ. դրամ այն դեպքում, երբ այդ օբյեկտի շինարարության տևողությունը սահմանվել է 12 ամիս, իսկ տեխնիկական հսկողության պայմանագրի գնման առարկայի բնութագրում սահմանվել է, որ բազմաթիվ այլ ֆունկցիաների հետ միասին տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը օբյեկտում պարտադիր է:

8.2.2 2017թ-ի իրականացրած Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ342+400-347+000 հատվածի միջին նորոգման նախագծով նախատեսվել է այդ հատվածում գոյություն ունեցող ամբողջ պատվածքի (ծածկի և հիմքի) քանդում և նորի կառուցում, այնինչ կապալառուն գրությամբ նշել է, որ առանձին հատվածներում գոյություն ունեցող ծածկը բավական ամուր է և անհրաժեշտություն չկա այն քանդելու և կատարել են աշխատանքի ծավալների փոփոխություն: Ընդ որում, համաձայն փոփոխության, չեն քանդել նախագծով նախատեսված 31,971 քմ նախկին ճանապարհաճածկույթից 16,500 քմ-ն կամ նախագծով նախատեսվածի 52%-ը:

8.2.3 2017-2018թթ «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի կողմից դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացրած ճանապարհների հետազոտության (այդ թվում գործիքային) արդյունքների հիման վրա կատարված տնտեսագիտական վերլուծության արդյունքում 2019թ-ին միջին նորոգման ենթարկված ճանապարհահատվածներից 600մ հատվածում (Ա/ճ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման, կմ174+100-կմ174+700 հատված) առաջարկել են կատարել վերակառուցման աշխատանքներ, այնինչ նույն ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողից կազմված թերությունների ակտով առաջարկվել է ասֆալտբետոնյա մեկ շերտի կառուցում, 7.4 կմ հատվածում (Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման, կմ227+300-կմ228+000 հատված, Ա/ճ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, կմ96+500- կմ106+100 հատված, Ա/ճ Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, կմ109+000-կմ111+000 հատված, Ա/ճ Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, կմ107+200-կմ107+900 հատված և Ա/ճ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ կմ64+000-կմ64+400 հատված) առաջարկել են կատարել երկշերտ

ասֆալտբետոնյա ծածկի կառուցում, այնինչ թերությունների ակտերում այդ հատվածներում նախատեսվել է ասֆալտբետոնյա մեկ շերտի կառուցում, 17.23 կմ հատվածում առաջարկել են մակերեսային մշակման աշխատանքների իրականացում, թերությունների ակտերով նախատեսել են ասֆալտբետոնյա մեկ շերտի կառուցում:

8.2.4 2017թ պայմանագրերով սահմանվել են աշխատանքների ընդունման ցուցանիշներ որոնցով սահմանել են ասֆալտբետոնյա վերին շերտի լրիվ ընդունման համար խտացման հայտանիշ (99%): Աշխատանքների մերժման հայտանիշ է սահմանվել 98.5%-ը: Ընդունման հայտանիշից յուրաքանչյուր 1% շեղման համար սահմանվել է պայմանագրային գնի նվազեցում 1%-ի չափով, առավելագույն նվազեցման չափը սահմանելով 5%: Նման ցուցանիշներ, որպես կանոն, սահմանվում են նաև վարկային ծրագրով կատարվող ճանապարհաշինարարական աշխատանքներում:

Աշխատանքների ընդունման նշված ցուցանիշները չեն ներառվել 2018-2019թթ պայմանագրերում, ինչով թուլացրել են վերահսկողական գործառույթը: Նշված ցուցանիշների կիրառման դեպքում 2018-2019թթ կատարողականներից կնվազեցնեին 88,565.00 հազ. դրամ: Մանրամասները տե՛ս հավելված 16-ում:

8.2.5 Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ342+400-347+000 հատվածի միջին նորոգման 2018թ աշխատանքների հսկողության հաշվետվության ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՊԿ342+400-ՊԿ344+100 հատվածի համար, որտեղ 2017թ կատարված աշխատանքների համար 2017թ-ին տեխ. հսկողություն իրականացրած «Հուսալի կամար» ՍՊԸ-ի մասնակցությամբ կազմվել էին նախագծային ծավալներին համապատասխանող ծածկված աշխատանքների ակտեր, կազմվել են նաև ծածկված աշխատանքների այլ ակտեր, նորից ամսագրված 2017թ-ով, սակայն արդեն «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի մասնակցությամբ, որտեղ նշված ծավալները և աշխատանքների կատարման ժամկետները էականորեն տարբերվում են «Հուսալի կամար» ՍՊԸ-ի վերը նշված հաշվետվությունում ներառված ծածկված աշխատանքների ակտերում նշված ժամկետներից և ծավալներից: Մասնավորապես, համաձայն «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի մասնակցությամբ կազմված ծածկված աշխատանքների ակտերի 2017թ-ին կատարվել է 9,190 քմ ավազակոպճային ծածկի և 5,760 քմ բիտումով տոգորված խճի շերտի տեղադրման աշխատանքներ, իսկ համաձայն «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հաշվետվությունում առկա ծածկված աշխատանքների ակտերի և պատվիրատուի կողմից ընդունված 2017թ կատարողական ակտերի, այդ աշխատանքների

ծավալները 2017թ-ին կազմել են համապատասխանաբար 17,027 քմ և 12,800 քմ: Բացի այդ, համաձայն կատարողական ակտերի, 2018թ-ին կատարվել է 13,320 քմ ավազակոպճային շերտի և 10,596 քմ բիտումով տոգորված խճի շերտի իրականացման աշխատանքներ, այնինչ համաձայն ծածկված աշխատանքների ակտերի 2018թ աշխատանքների ծավալները կազմում են համապատասխանաբար 21,158 քմ և 17,987 քմ

8.2.6 2017թ-ին թվով 1 պայմանագրի շրջանակներում թվով 34 դեպքով, 2018թ-ին թվով 2 պայմանագրերի շրջանակներում 28 դեպքով և 2019թ-ին թվով 12 պայմանագրերի շրջանակներում 188 դեպքով առկա են անհամապատասխանություններ ասֆալտբետոնե խառնուրդի նմուշառման և ասֆալտբետոնի տեղադրման ամսաթվերի միջև, օրինակ՝ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ342+400–կմ347+000 հատվածի միջին նորոգման օբյեկտում ստորին շերտի ա/բ խառնուրդի ճանապարհահատվածից և ԱԲԳ-ից նմուշառված նմուշը լաբորատորիա է ներկայացվել 03.05.2018թ, այնինչ, համաձայն ծածկված աշխատանքների ընդունման ակտի, ճանապարհային ծածկի ստորին շերտը այդ հատվածում իրականացվել է 10.05.2018թ-ին: Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ348+750–կմ354+520 հատվածի միջին նորոգման աշխատանքներում ստորին շերտի ա/բ խառնուրդի նմուշառումը ճանապարհահատվածից և ԱԲԳ-ից կատարվել է 20.07.2018թ, այնինչ համաձայն ծածկված աշխատանքների ընդունման ակտի, ճանապարհային ծածկի ստորին շերտը այդ հատվածում իրականացվել է 06.08.2018թ: Մանրամասները տե՛ս հավելված 17-ում:

8.3 Մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման աշխատանքներ

8.3.1 2016-2018թթ Հանրապետական և միջպետական նշանակության ավտոճանապարհներին տեղադրվել են 167,163 գծմ նոր մետաղական արգելափակոցներ, որոնցից 21,856 գծմ-ի երաշխիքային ժամկետը սահմանվել է 3 տարի, իսկ մնացածինը 1 տարի, տեղադրման հենց հաջորդ տարվանից, դեռևս երաշխիքի մեջ գտնվող արգելափակոցները հանձնվել են պահպանության այնինչ համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011թ թիվ 79-Ն հրամանով հաստատված մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների և դրանց ընդունման կարգի ավտոմոբիլային ճանապարհների

վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանման աշխատանքների զգալի մասն ըստ էության արգելափակոցներում՝ ԳՕՍՏ-ի պահանջների նկատմամբ ի հայտ եկած թերությունների վերացման աշխատանքներ են և երաշխիքային ժամկետում դրանց ի հայտ գալու դեպքում այն պետք է իր հաշվին վերացնեին արգելափակոցները տեղադրող կապալառու ընկերությունը:

8.3.2 Արգելափակոցների վիճակի գնահատման ակտերի և պայմանագրերի համադրմամբ արձանագրվել են արգելափակոցների երկարությունների էական շեղումներ: Օրինակ, 2019թ Գուգարքի տարածաշրջանում գնահատվել են 20435գծմ արգելափակոց, իսկ պայմանագրում ներառվել են 16,765 գծմ, 2018թ Աբովյանի տարածաշրջանում վիճակի գնահատման ակտերով գնահատվել են 38,538 գծմ արգելափակոցներ, իսկ պայմանագրում արտացոլել են 48,709 գծմ:

8.3.3 Մի շարք դեպքերում կատարողական ակտերի գումարները զգալի պակաս են պայմանագրային գումարներից, սակայն նվազեցումների վերաբերյալ որևէ հիմքեր չեն ներկայացվել և կատարողականներում չեն արտացոլել թե պայմանագրերում ներառված արգելափակոցներից, որ արգելափակոցները չեն սպասարկվել: Օրինակ, Աբովյանի տարածաշրջանի համար 2018թ-ի պայմանագրով նախատեսված 66,487.00 հազ. դրամի փոխարեն կատարողական հաշվարկվել է 54,383.00 հազ. դրամ:

8.4 Գծանշման աշխատանքներ

8.4.1 Համաձայն ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետի պահանջի ճանապարհների գծանշումը, բացառությամբ 4-րդ կարգի ճանապարհներինը, պետք է կատարվի լուսանդրադարձիչ նյութի կիրառմամբ: Բացի այդ սահմանված են չոր վիճակում գծանշման համար պայծառության, չոր ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման, անձրևի և թաց ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման և չոր վիճակում ցրված լույսի կամ արհեստական լուսավորության դեպքում լուսարտացուման գործակիցներ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ պատվիրատուի կողմից աշխատանքներն ընդունելիս չեն ստուգվել վերը նշված պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացուման գործակիցները: Բացի այդ, որևէ

փաստաթղթով (սերտիֆիկատ, անձնագիր և այլն) չեն հիմնավորվել աշխատանքներն իրականացնելիս օգտագործվող ներկանյութերով վերը նշված կանոններով սահմանված պայծառության, լուսանդրադարձելիության և լուսարտացոլման ապահովման հնարավորությունը :

8.5 Գնումներ

8.5.1 Համաձայն ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/14Շ ծածկագրով մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությանը, որը ստորագրված է հանձնաժողովի անդամների կողմից, այն կայացել է 26.07.2019թ-ին ժամը 11:00-ին: Նույն օրը, նույն ժամին, հանձնաժողովի նույն կազմի կողմից ստորագրված է մեկ այլ՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/17Շ ծածկագրով մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությանը:

8.5.2 ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժի շրջանակում, 01.07.2019թ-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության այն մասնակցի հետ, որի հայտը մերժվել է նախորդ նիստով: Այնուհետև, 02.07.2019թ-ին հրապարակվել է նիստով ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն: Նույն մրցույթի շրջանակում կայացած տարբեր՝ 02.08.2019թ-ի և 12.08.2019թ-ի, նիստերի արձանագրությունների համարը նույն է՝ թիվ 4:

8.6 Առարկություններ և պարզաբանումներ

Հաշվեքննության ընթացքում կազմված թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության օբյեկտի ղեկավարին են ներկայացվել 07.07.2020թ-ին և 20.07.2020թ-ին, որոնց վերաբերյալ պարզաբանումները ներկայացվել են 22.01.2021թ-ին:

Ներկայացված պարզաբանումներից արձանագրություններում արձանագրված առանց սահմանված կարգով նախագծային փաստաթղթերի աշխատանքներ իրականացնելու և աշխատանքների որակի տեխնիկական հսկողությունը չապահովելու փաստերի վերաբերյալ պարզաբանումները մասնակիորեն (2019թ-ի բոլոր օբյեկտների և 2018թ-ի թվով 4 օբյեկտների մասով) ընդունվել են: Արձանագրությունում արձանագրված 2019թ-ին առանց սահմանված կարգով կազմված նախահաշվի աշխատանքներ կատարելու փաստի վերաբերյալ պարզաբանումը ամբողջությամբ ընդունվել է:

Ճանապարհների պահպանման մասով ներկայացրած պարզաբանումների «Հաշվեքննիչ պալատի կողմից նշված փաստեր» սյունակում ներկայացրել են նաև այնպիսի փաստեր, որոնք մեր կողմից կազմված արձանագրությունում արձանագրված չեն:

Պարզաբանումների հետ ներկայացվել են նաև «ԱԱԲ պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարած 14,751.59 հազ. դրամի տույժերի և ավելի վճարված կանխավճարի հետվերադարձի վճարման հանձնարարագրեր, և թվով 4 հանուկների լաբորատոր հետազոտության արձանագրություններ, որոնք հաշվի են առնվել ընթացիկ եզրակացությունը կազմելիս:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Կառավարությանը

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշմամբ հաստատված՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ներառված ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջներին

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին

Նորմատիվաիրավական ակտով հստակ սահմանել ավտոճանապարհների պարբերական պահպանման (միջին նորոգման) նկարագրությունը, բնույթը և չափանիշները

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

Կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերում տարանջատված սահմանել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային նվազագույն ժամկետները ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի»-ի VII-րդ գլխի 33-րդ մասի 10-րդ կետի պահանջով նախագծային ընկերության կողմից նախագծային փաստաթղթերում ներկայացված երաշխիքային ժամկետների չափով:

4. ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին

Ծածկի փոսային նորոգում եզրույթի տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար (հիմքի շերտով թե առանց հիմքի շերտի), ինչպես նաև հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում կան ճանապարհներ, որոնց երկարությունը մինչև 384 կմ է, անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (ՀՀ-ում ըստ ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) օբյեկտները և դրանց դասակարգումը) II մասի 11)-րդ կետի

ը) ենթակետում կիրառված «ճանապարհային ծածկի առանձին տեղերի հարթեցում» եզրույթում ամեն առանձին տեղի մակերեսի առավելագույն չափը կամ ճանապարհի ծածկի ընդհանուր մակերեսի (ճանապարհի ընդհանուր երկարության) համեմատ տոկոսը

թ) ենթակետում կիրառված «առանձին եզրաքարերի ուղղում» եզրույթում եզրաքարերի առավելագույն քանակը կամ եզրաքարերի ընդհանուր երկարության համեմատ տոկոսը

ժգ) ենթակետում կիրառված «ճանապարհային ծածկի առանձին սալերի ուղղում և փոխում» եզրույթում սալերի առավելագույն քանակը կամ սալերի ընդհանուր քանակի համեմատ տոկոսը

ժդ) ենթակետում կիրառված «ճանապարհային ծածկի փոսային նորոգում, քայքայված հատվածների փոխարինում» եզրույթում

-ամեն առանձին քայքայված հատվածի առավելագույն չափը կամ ճանապարհի ծածկի ընդհանուր մակերեսի (ճանապարհի ընդհանուր երկարության) համեմատ տոկոսը

- սահմանել «ճանապարհային ծածկ» եզրույթի բնութագրերը և չափանիշները կամ հղում տալ սույն որոշման իմաստով այն ընդունել ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի 8-րդ մասի սահմանմամբ:

10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՀՀ միջպետական նշանակության ավտոճանապարհների դասակարգումը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 265-Ն որոշման

հազ. դրամ

Հ/հ	Ավտոճանապարհի անվանումը	Երկարությունը (կմ)	Դասակարգումը ըստ նշանակության						
			Ըստ կառավարության որոշման	Համաձայն օրենքի					
				Հանրապետական		Մարզային		Դաշտամիջյան	
				Միջպետական	Ճանապարհահատված	Երկարությունը (կմ)	Ճանապարհահատված	Երկարությունը (կմ)	Ճանապարհահատված
1	Երևան-Սևան-Իջևան-Ադր. սահման /Սևան-Իջևան հատված/	88.0	Մ-4	Սևան-Իջևան-Ադր. սահման	88.0				
2	Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման (թևերով)	63.1	Մ-5	Երևան-Արմավիր	52.0	Արմավիր-Թուրքիայի սահման	11.1		
3	Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման	54.3	Մ-7	Մ3-Սպիտակ-Գյումրի	47.1	Գյումրի-Թուրքիայի սահման	7.2		
4	Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	42.0	Մ-8	Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	42.0				
5	Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման	55.8	Մ-9	Մ1-Թալին	1.1	Քարակերտ-Թուրքիայի սահման	54.7		
6	Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման	28.2	Մ-13			Մ2-Անգեղակոթ	4.0	Անգեղակոթ-Նախիջևանի սահման	24.2

Հ/հ	Ավտոճանապարհի անվանումը	Երկարությունը (կմ)	Դասակարգումը ըստ նշանակության							
			Ըստ կառավարության որոշման	Համաձայն օրենքի						
				Հանրապետական		Մարզային		Դաշտամիջյան		
				Միջպետական	Ճանապարհահատված	Երկարությունը (կմ)	Ճանապարհահատված	Երկարությունը (կմ)	Ճանապարհահատված	Երկարությունը (կմ)
7	Մոտեցում նախիջևանի սահմանին Ագարակից	6.3	Մ-2						Մոտեցում նախիջևանի սահմանին Ագարակից	6.3
8	Մ4-Շորժա-Վարդենիս	97.8	Մ-14	Մ4-Շորժա-Վարդենիս	97.8					
9	Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Մ-16	Մ4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0					
10	Մ2-Կապան-Ծավ-Մ2	90.8	Մ-17				Մ2-Կապան-Ծավ-Մ2	90.8		
Ընդամենը		585.3			387.0			167.8		30.5

Հավելված 2

Աղյուսակ 1. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2017թ ընթացիկ ծմեռային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը	
								Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը		
1	Մ5	Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/	52.0	Միջպետական	Հանրապետական	Էջմիածին /«Ավտոճ.մեքենաներ» ՓԲԸ	24.0	լավ	150.90	3,621.60	լավ	62.16	1,491.84	2,129.76	
								լավ	390.90	6,879.84	լավ	137.52	2,420.28	-	4,459.56
2	Մ7	Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետական	Հանրապետական	Սպիտակ /«Ճանապարհ» ՓԲԸ	26.1	լավ	450.20	11,759.22	լավ	324.12	8,466.01	-	3,293.21
								լավ	398.40	6,215.04	լավ	225.36	3,515.62	-	2,699.42
3	Մ8	Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	42.0	Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	7.8	լավ	536.85	4,187.43	լավ	359.34	2,802.86	-	1,384.57

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
								Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
4	Մ9	Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման /Մ1-Թալին/	1.1	Միջպետական	Հանրապետական	«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ	1.1	բավ	416.90	458.59	բավ	294.84	324.32	-134.27
5	Մ14	Մ4 Շորժա-Վարդենիս	97.8	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ	12.2	միջին	510.12	6,223.46	միջին	309.48	3,775.66	-2,447.81
						Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	51.5	միջին	431.83	22,239.25	միջին	317.00	16,325.40	-5,913.85
						Վարդենիս/Կապավոր» ՍՊԸ	34.1	լավ	556.92	18,990.97	լավ	478.38	16,312.92	-2,678.05
6	Մ16	Մ-4 Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	12.0	լավ	394.80	4,737.60	լավ	261.60	3,139.20	-1,598.40
						Նոյեմբերյան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	47.0	լավ	411.26	19,329.22	լավ	299.49	14,076.20	-5,253.02
7	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Ադր.սահման Սևան-Ադր.սահման հատված	88.0	Միջպետական	Հանրապետական	Սևան /Ծովագյուղ ՍՊԸ	13.2	լավ	1,061.04	14,005.73	լավ	974.04	12,857.33	-1,148.40
				Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	28.3	լավ	536.80	15,191.44	լավ	359.40	10,171.02	-5,020.42

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
				Միջպետական	Հանրապետական			Իջևան/«Լևոն Երկրորդ» ՍՊԸ	36.3	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	
								լավ	394.80	14,331.24	լավ	261.60	9,496.08	- 4,835.16
Ընդամենը			387.0				326.8							- 42,995.89

Աղյուսակ 2. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2017թ ընթացիկ ամառային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Պիկետ	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
				Միջպետական	Հանրապետական				Էջմիածին /«Ավտոճ.մեքենաներ»ՓԲԸ	10.4 - 34.4	3.2	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
1	Մ5	Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/	52.0	Միջպետական	Հանրապետական	Էջմիածին /«Ավտոճ.մեքենաներ»ՓԲԸ	10.4 - 34.4	3.2	լավ/լավ	915.80	2,930.56	լավ/լավ	600.12	1,920.38	1,010.18
								20.8	բավ/միջին	2,136.30	44,435.04	բավ/միջին	1,115.88	23,210.30	21,224.74
								0.8	լավ/լավ	1,501.50	1,126.13	լավ/լավ	938.00	703.50	422.63

Հ / հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/ Կապալառու	Պիկետ	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
									Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
						տ» ՓԲԸ	52.0	16.9	բավ/միջին/	2,230.10	37,577.19	բավ/միջին/	1,641.70	27,662.65	9,914.54
2	Մ8	Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետական	Հանրապետական	Ախուրյան /«Մերձնոսկովյան» ՍՊԸ	27.2 - 42.8	15.6	բավ/միջին/	1,266.00	19,749.60	բավ/միջին/	1,176.00	18,345.60	1,404.00
3	Մ9	Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	42.0	Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	34.2 - 42.0	2.0	երաշ./լավ/	479.86	959.72	երաշ. լավ	449.13	898.27	61.45
							5.8	բավ/լավ/միջին/	1,537.93	8,919.99	բավ. միջին	1,450.20	8,411.16	508.83	
4	Մ9	Մ1-Թային-Քարակերտ-Թուրքիայի սահման /Մ1-Թային/	1.1	Միջպետական	Հանրապետական	«Թայինի ԱՏՃ» ՓԲԸ	0-1.1	1.1	լավ/լավ/	806.90	887.59	լավ/լավ/	734.60	808.06	79.53
5	Մ16	Մ-4 Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ/	0-12	6.0	լավ/միջին/	982.80	5,896.80	լավ/միջին/	696.00	4,176.00	1,720.80
								6.0	բավ/միջին/	1,236.00	7,416.00	բավ/միջին/	862.80	5,176.80	2,239.20
6	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Աղր. սահման /Սևան-Իջևան-Աղր. սահման հատված/	88.0	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ/	60-73.2	4.7	լավ/լավ/	1,228.20	5,772.54	լավ/լավ/	963.96	4,530.61	1,241.93
								8.5	բավ/միջին/	2,152.30	18,294.55	բավ/միջին/	1,304.64	11,089.44	7,205.11

Հ / հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/ Կապալառու	Պիկետ	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
									Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
							73.2 - 80.92	7.7	երաշ./լավ/	495.60	3,826.03	երաշ./լավ/	454.92	3,511.98	314.05
				Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	83.4 - 111.7	13.1	լավ/լավ/	704.30	9,226.33	լավ/լավ/	679.32	8,899.09	327.24
				Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	111.7 - 148	6.0	լավ/լավ/	982.80	5,896.80	լավ/միջին/	696.00	4,176.00	1,720.80
								30.3	բավ/միջին/	1,236.00	37,450.80	բավ/միջին/	862.80	26,142.84	11,307.96
7	Մ14	Մ4 Շորժա-Վարդենիս	97.8	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ		1.4	բավ միջ	1,496.40	2,065.03	բավ միջ	1,304.64	1,800.40	264.63
						Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	47.8 0	47.8	բավ միջ	1,590.56	76,028.77	բավ միջին	1,473.61	70,438.56	5,590.21
						Վարդենիս/Կապավոր» ՍՊԸ	30.2 2	1.9	լավ Լավ	1,034.57	1,965.68	լավ Լավ	910.38	1,729.72	235.96
Ընդամենը			387.0					214.70							68,126.8

Աղյուսակ 3. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2018թ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
								Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
1	Մ5	Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/	52.0	Միջպետական	Հանրապետական	Էջմիածին/«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ	24.0	լավ	150.90	3,621.60	լավ	62.16	1,491.84	- 2,129.76
						Արմավիր/«Ճանշինվարպետ» ՓԲԸ	17.6	լավ	390.90	6,879.84	լավ	137.52	2,420.28	- 4,459.56
2	Մ7	Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետական	Հանրապետական	Սպիտակ /«Ճանապարհ» ՓԲԸ	26.1	լավ	450.20	11,759.22	լավ	324.12	8,466.01	- 3,293.21
						Ախուրյան /«Մերձմոսկովյան» ՍՊԸ	15.6	լավ	398.40	6,215.04	լավ	225.36	3,515.62	- 2,699.42
3	Մ8	Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	42.0	Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	7.8	լավ	536.85	4,187.43	լավ	359.34	2,802.86	- 1,384.57
4	Մ9	Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման /Մ1-Թալին/	1.1	Միջպետական	Հանրապետական	«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ	1.1	լավ	463.10	509.41	բավ	349.76	384.74	- 124.67
5	Մ14	Մ4 Շորժա-Վարդենիս	97.8	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Շովազյուղ ՃՇՇ» ՍՊԸ	12.2	միջին	510.12	6,223.46	միջին	309.48	3,775.66	- 2,447.81

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան/Կապալառու	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
								Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
						Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	51.5	լավ	450.84	23,218.16	լավ	329.16	16,951.74	- 6,266.42
						Վարդենիս/Կապավոր» ՍՊԸ	34.1	լավ	556.92	18,990.97	լավ	478.38	16,312.92	- 2,678.05
6	Մ16	Մ-4 Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	12.8	լավ	394.80	5,053.44	լավ	261.60	3,348.48	- 1,704.96
						Նոյեմբերյան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	46.2	լավ	411.26	19,000.21	լավ	299.49	13,836.60	- 5,163.61
7	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Արր.սահման Սևան-Արր.սահման հատված	88.0	Միջպետական	Հանրապետական	Սևան /Ծովագյուղ ՍՊԸ	5.5	լավ	1,061.04	5,814.50	լավ	974.04	5,337.74	- 476.76
				Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	28.3	լավ	536.80	15,191.44	լավ	359.40	10,171.02	- 5,020.42
				Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	36.3	լավ	394.80	14,331.24	լավ	261.60	9,496.08	- 4,835.16
Ընդամենը			387.0				319.1							- 42,684.38

Աղյուսակ 4. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2018թ ընթացիկ ամառային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ	Ճանապ	Ճանապարհի	Ճանապ	Ճանապար	Ճանապար	Տարածաշրջան/	Պիկ	Երկ	Միջպետական	Հանրապետական	Տարբերությ
---	-------	-----------	-------	---------	---------	--------------	-----	-----	------------	--------------	------------

/h	արհի համար ը	անվանումը	արհի ընդհան ուր երկարու թյունը	հի նշանակու թյունը ըստ ՀՀ Կառավար ության թիվ 265-Ն որոշման	հի նշանակու թյունը ըստ «Ավտոմոբ իլային ճանապար հների մասին» ՀՀ օրենքի	Կապալառու	ետ	արու թյուն ը	Սպասա րկման մակար դակը	1 կմ պահպա նման գինը	Գումարը	Սպա սարկ ման մակա րդակ ը	1 կմ պահպա նման գինը	Գումարը	ունը
1	Մ5	Երևան-Արմավիր- Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/	52.0	Միջպետա կան	Հանրապե տական	Էջմիածին /«Ավտոճանապար հային մեքենաներ» ՓԲԸ	10.4 -	3.2	լավ/լավ /	915.80	2,930.56	լավ/լ ավ/	600.00	1,920.00	- 1,010.56
							34.4	20.8	բավ/մի ջին/	2,136.30	44,435.04	բավ/մ իջին/	1,115.88	23,210.30	- 21,224.74
						Արմավիր /«Ճանշինվարպե տ» ՓԲԸ	34.4 -52	17.6	բավ/մի ջին/	2,230.10	39,249.76	բավ/մ իջին/	1,641.70	28,893.92	- 10,355.84
2	Մ8	Մ3-Սպիտակ- Գյումրի- Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետա կան	Հանրապե տական	Ախուրյան /«Մերձմոսկովյան » ՍՊԸ	27.2 -	15.6	բավ/մի ջին/	1,266.0 0	19,749.60	բավ/մ իջին/	1,176.00	18,345.60	- 1,404.00
3	Մ9	Վանաձոր (Մ-6 հատման կետ)- Դիլիջան	42.0	Միջպետա կան	Հանրապե տական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	34.2 -	2.0	լավ. լավ	704.35	1,408.69	լավ. լավ	679.63	1,359.26	- 49.43
							42.0	5.8	բավար ար/միջ ին/	1,537.93	8,919.99	բավ. միջին	1,450.23	8,411.35	- 508.64
4	Մ9	Մ1-Թալին- Քարակերտ- Թուրքիայի սհման /Մ1-Թալին/	1.1	Միջպետա կան	Հանրապե տական	«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ	0-1.1	1.1	լավ/լավ /	806.90	887.59	լավ/լ ավ/	734.76	808.24	- 79.35
5	Մ15	Մ4- Շորժա- Վարդենիս	97.8	Միջպետա կան	Հանրապե տական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ		1.4	բավ/մի ջին/	1,496.40	2,065.03	բավ/մ իջին/	1,304.64	1,800.40	- 264.63
						Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	12.2 -	47.8	բավ/մի ջին/	1,590.5 6	76,028.77	բավ/մ իջին/	1,473.61	70,438.60	- 5,590.17
						Վարդենիս/Կապ ավոր» ՍՊԸ	63.7 -	1.9	լավ.լավ	1,034.57	1,965.68	լավ.լ ավ	910.38	1,729.72	- 235.96

							97.8												
6	Մ16	Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն Երկրորդ» ՍՊԸ	0-12	6.0	լավ/միջին/	982.80	5,896.80	լավ/միջին/	696.00	4,176.00	- 1,720.80				
								2.7	բավ/միջին/	1,236.00	3,337.20	բավ/միջին/	862.80	2,329.56	- 1,007.64				
7	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Աղր. սահման /Սևան-Իջևան-Աղր. սահման հատված/	88.0	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ	60-73.2	4.2	Երաշ./լավ/	729.84	3,065.33	Երաշ./լավ/	454.92	1,910.66	- 1,154.66				
								7.0	լավ/լավ /	1,228.20	8,597.40	լավ/լավ /	963.96	6,747.72	- 1,849.68				
								2.0	բավ/միջին/	2,152.30	4,304.60	բավ/միջին/	1,304.64	2,609.28	- 1,695.32				
								7.7	լավ/լավ /	1,038.20	8,014.90	լավ/լավ /	963.90	7,441.31	- 573.60				
								Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	83.4 - 111.7	4.8	Երաշ./լավ/	479.90	2,303.52	Երաշ./լավ/	449.16	2,155.97	- 147.55
				13.1	լավ/լավ /	704.30	9,226.33					լավ/լավ /	679.32	8,899.09	- 327.24				
				10.4	բավ/միջին/	1,537.90	15,994.16					բավ/միջին/	1,450.20	15,082.08	- 912.08				
				Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն Երկրորդ» ՍՊԸ	111.7 - 148	6.0	լավ/միջին /	982.80	5,896.80	լավ/միջին/	396.00	2,376.00	- 3,520.80				
								30.3	բավ/միջին/	1,236.00	37,450.80	բավ/միջին/	862.80	26,142.84	- 11,307.96				
Ընդամենը			387.0					211.4							- 64,940.65				

Աղյուսակ 5. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2019թ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ/հ	Ճանապարհի	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի	Ճանապարհի	Ճանապարհի	Տարածաշրջան/ Կապալառու	Երկարությունը	Միջպետական	Հանրապետական	Տարբերությունը
-----	-----------	---------------------	-----------	-----------	-----------	------------------------	---------------	------------	--------------	----------------

համարը	ընդհանուր երկարությունը	նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի		Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը				
1	Մ5	Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/	52.0	Միջպետական	Հանրապետական	Էջմիածին/ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ	24.0	լավ	150.90	3,621.60	լավ	62.16	1,491.84	- 2,129.76
						Արմավիր/ «Ճանշինվարպետ» ՓԲԸ	17.6	լավ	390.90	6,879.84	լավ	137.50	2,420.00	- 4,459.84
2	Մ7	Մ3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետական	Հանրապետական	Սպիտակ /«Ճանապարհ» ՓԲԸ	26.1	լավ	450.00	11,754.00	լավ	324.12	8,466.01	- 3,287.99
						Ախուրյան /«Մերձմոսկովյան» ՍՊԸ	15.6	լավ	426.20	6,648.72	լավ	241.08	3,760.85	- 2,887.87
3	Մ-8	Վանաձոր (Մ-6 հատման կետ)- Դիլիջան	42.0	Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	7.8	լավ	536.85	4,187.43	լավ	359.34	2,802.86	- 1,384.57
4	Մ9	Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման /Մ1-Թալին/	1.1	Միջպետական	Հանրապետական	«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ	1.1	լավ	463.10	509.41	լավ	349.76	384.74	- 124.67
5	Մ14	Մ4 Շորժա-Վարդենիս	97.8	Միջպետական	Հանրապետական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ	12.2	միջին	510.12	6,223.46	միջին	309.48	3,775.66	- 2,447.81
						Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	51.5	լավ	450.84	23,218.16	լավ	324.00	16,686.00	- 6,532.16

						Վարդենիս/Կապավոր» ՍՊԸ	34.1	լավ	556.92	18,990.97	լավ	478.38	16,312.92	- 2,678.05
6	Մ16	Մ-4 Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ6	59.0	Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	12.8	լավ	394.80	5,053.44	լավ	261.60	3,348.48	- 1,704.96
						Նոյեմբերյան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	46.2	լավ	411.26	19,000.21	լավ	299.49	13,836.60	- 5,163.61
7	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Աղր.սահման Սևան-Աղր.սահման հատված	88.0	Միջպետական	Հանրապետական	Սևան /Ծովագյուղ ՍՊԸ	5.5	լավ	1,061.04	5,814.50	լավ	974.04	5,337.74	- 476.76
				Միջպետական	Հանրապետական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	28.3	լավ	536.80	15,191.44	լավ	359.40	10,171.02	- 5,020.42
				Միջպետական	Հանրապետական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	36.3	լավ	394.80	14,331.20	լավ	261.60	9,496.08	- 4,835.12
Ընդամենը			387.0				319.1							- 43,133.58

Աղյուսակ 6. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սխալ դասակարգման հետևանքով 2019թ ընթացիկ ամառային պահպանման ժամանակ ավելի վճարված գումարներ

հազ. դրամ

Հ/հ	Ճանապարհի համարը	Ճանապարհի անվանումը	Ճանապարհի ընդհանուր երկարությունը	Ճանապարհի նշանակությունը ըստ ՀՀ Կառավարության թիվ 265-Ն որոշման	Ճանապարհի նշանակությունը ըստ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի	Տարածաշրջան / Կապալառու	Պիկետ	Երկարությունը	Միջպետական			Հանրապետական			Տարբերությունը
									Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	Սպասարկման մակարդակը	1 կմ պահպանման գինը	Գումարը	
1	Մ5	Երևան-Արմավիր	52.0	Միջպետական	Հանրապետական	Էջմիածին /«Ավտոճանապարհ»	10.4	3.2	լավ/լավ	915.80	2,930.56	լավ/լավ	600.12	1,920.38	- 1,010.18

		- Թուրքիայի սահման /մինչև Արմավիր/ /				արհային մեքենաներ» ՓԲԸ	34. 4	20.8	բավ/մ իջին/	2,136.3 0	44,435.0 4	բավ/մ իջին/	1,115.88	23,210.30	- 21,224.74
						Արմավիր /«Ճանշինվար պետ» ՓԲԸ	34.4 -52	8.2	բավ/մ իջին/	2,230.10	18,286.82	բավ/մ իջին/	1,641.70	13,461.94	- 4,824.88
								9.4	երաշ./ լավ/	725.70	6,821.58	երաշ./ լավ/	451.44	4,243.54	- 2,578.04
2	Մ-7	Մ3- Սպիտակ -Գյումրի- Թուրքիայի սահման (մինչև Գյումրի)	47.1	Միջպետակ ան	Հանրապե տական	Ախուրյան /«Մերձմոսկով ան» ՍՊԸ	27.2 - 42. 8	15.6	բավ/մ իջին/	1,354.6 0	21,131.76	բավ/մ իջին/	1,258.30	19,629.48	- 1,502.28
3	Մ-8	Վանաձո ր (Մ-6 հատման կետ)- Դիլիջան	42.0	Միջպետակ ան	Հանրապե տական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	34.2 - 42. 0	2.0	լավ. լավ	704.35	1,408.69	լավ. լավ	679.63	1,359.26	- 49.43
								5.8	բավա րար/մ իջին/	1,537.93	8,919.99	բավ. միջի ն	1,450.23	8,411.35	- 508.64
4	Մ9	Մ1- Թալին- Քարակե րտ- Թուրքիայի սահման /Մ1- Թալին/	1.1	Միջպետակ ան	Հանրապե տական	«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ	0-1.1	1.1	լավ/լավ/ լավ/	806.90	887.59	լավ/լավ/ լավ/	734.76	808.24	- 79.35
5		Մ4- Շորժա- Վարդենի ս	97.8	Միջպետակ ան	Հանրապե տական	Ճամբարակ /Ճամբարակի ՃՇՇ» ԲԲԸ	12.2- 63. 7	2.2	բավ/մ իջին/	1,496.4 0	3,292.08	բավ/մ իջին/	1,304.64	2,870.21	- 421.87
								40.8	բավ/մ իջին/	1,590.5 6	64,894.8 5	բավ/մ իջին/	1,473.61	60,123.32	- 4,771.53
								7.0	երաշ./ լավ/	486.10	3,402.70	երաշ./ լավ/	445.80	3,120.60	- 282.10
6	Մ16	Մ-4- Ոսկեպար- Նոյեմբեր յան-Մ6	59.0	Միջպետակ ան	Հանրապե տական	Իջևան/«Լևոն երկրորդ» ՍՊԸ	0-12	4.2	երաշ./ լավ/	483.60	2,031.12	երաշ./ լավ/	445.20	1,869.84	- 161.28
								6.0	լավ/մի ջին/	982.80	5,896.80	լավ/մ իջին/	696.00	4,176.00	- 1,720.80
								1.0	բավ/մ իջին/	1,236.0	1,236.00	բավ/մ իջին/	862.80	862.80	- 373.20

									0									
						Նոյեմբերյան/« Լևոն Երկրորդ» ՍՊԸ	12.8- 59. 0	14.1	երաշ./ լավ/	481.50	6,789.15	երաշ/լ ավ	442.56	6,240.10	- 549.05			
7	Մ-4	Երևան- Սևան- Իջևան- Աղր. սահման /Սևան- Իջևան- Աղր.սահ ման հատված/	88.0	Միջպետակ ան	Հանրապե տական	Սևան /«Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ	60- 73.2	4.2	երաշ./ լավ/	729.84	3,065.33	երաշ. /լավ/	454.92	1,910.66	- 1,154.66			
								2.8	լավ/լա վ/	1,228.20	3,438.96	լավ/լ ավ/	963.96	2,699.09	- 739.87			
								6.2	բավ/մ իջին/	2,152.30	13,344.26	բավ/մ իջին/	1,304.64	8,088.77	- 5,255.49			
								73.2 - 80. 92	7.7	լավ/լա վ/	1,038.2 0	8,014.90	լավ/լ ավ/	963.90	7,441.31	- 573.60		
				Միջպետա կան	Հանրապե տական	Դիլիջան /«Հաղարծին» ՓԲԸ	83.4 - 111. 7	4.8	երաշ./ լավ/	479.90	2,303.52	երաշ. /լավ/	449.16	2,155.97	- 147.55			
								22.7	բավ/մ իջին/	1,537.90	34,910.33	բավ/մ իջին/	1,450.20	32,919.54	- 1,990.79			
				Միջպետա կան	Հանրապե տական	Իջևան/«Լևոն Երկրորդ» ՍՊԸ	111.7 -148	6.0	լավ/լա վ/	982.80	5,896.80	լավ/լ ավ/	739.20	4,435.20	- 1,461.60			
								23.7	բավ/մ իջին/	1,236.0 0	29,293.2 0	բավ/մ իջին/	810.48	19,208.38	- 10,084.82			
				Ընդամենը			387.0											- 61,465.76

Հավելված 3

Ըստ օրենքի մագրային իսկ Կառավարության որոշմամբ Միջպետական սահմանված ճանապարհների պահպանման համար վճարված գումարների վերաբերյալ հազ.դրամ

Հ/հ	Ավտոմեքանակների անվանումներ	Դասակարգումը ըստ նշանակության				Տարածանքային	Կատարողականի գումարը հազ. դրամ																			Ընդամենը 2017-2019թթ. կառավարական			
		Ըստ կատարողի	Ըստ օրենքի պահանջների	Ճանապարհի հատված	Երկաթուղու միջանկյալ կետեր (կմ)		2017						2018թ						2019թ										
							Ամառ		Զմեռ		Ընդամենը		Ամառ		Զմեռ		ընդամենը		Ամառ		Զմեռ		ընդամենը						
